ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՑԻՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԿՄԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1869 – *ՌՃԺԹ–ՌՃԺԹ*

© National Library of Armenia



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՁԺԸ· 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ· — ՅՈՒՆՈՒԱՐ

1869

Հաղիւ թէ անցեալ տարւոյն արեգը իւր հետախաղաղ ճառագայթներն ամփոփեց, ահա հազար ութհարիւր վաթսուն և ինն տարւոյն առաւօտը ծագեց իւր յառաջախաղաց ճառագայթները, ողջունելով նախ Հայաստան աշխարհին բարձրագագաթ լերանց բնակիչքը, եղջը սորաբնակ եղջիները, եղջը դաշտեայկքն, յեսոյ և ծովամերձ հիւղերը։ Հազարութհարիւր վաթսուն և ինն տարւոյն առաջին ճառագայթները ինչպէս զուարթուն ոդի՝ եթերաց մէջէն սաւառնելով ամեն հայ մարդոյ երեսին ժպիտ ու համբոյր տալով՝ լսելի ըրաւ սա խնդութեան ասսիւնը. « Ողջոյն ընդ ձեզ որդիք Թորգոմայ. եօթնալահեան լուսով արփիանամ, ձեզ վերէն պատգամաւոր գամ, այս նոր տարիով նորանոր խնդութիւն աւետեմ։ Ողջոյն ընդ ձեզ սեպուհք, տանուտեարք, տուրհատուղք, արուեստաւորք, դիւղականք, չինաբնակք, կանայք և մանկունք, ամենուդ ձեզ մի հաւասար արև՝ և ձեր կենաց մի հաւասար զարգումն կը մաղթեմ»։ — Նոր արեւուն նոր ողջունին հետ Թորգոմեան ազգին բարեբաստ օրեր և բարգաւաճանք կը մաղթէ Բազմավէպ։

Սրդէն անցեալ տարիներ նոյն բերկրապատար համբոյրներով իրար ողջունեցինք և եղբայրացանք, և եղբայրութեան քաղցր հաւատովքը սկսանք քիչ քիչ տեսնել։ Քանդի Թորգոմեան տոհմը խաղաղութեան ոգւով լցեալ ակնկալութենէ

© National Library of Armenia

վեր ազգային և մտաւորական շարժումն երևցունել սկսաւ , և յայտնի ըրաւ թէ ինքն ալ մարդկային մեծ ազգին արժանաւոր տոհմերէն մէկն է , և կարող՝ ատենով այլ քաղաքայնեալ ազգաց հետ ընթացակից ըլլալ :

Արևմտեան Ասիոյ հին աշխարհը իւր անցեալ ժամանակներով՝ ժողովուրդներով կրօնքներով և լեզուփոխութիւններով մէկտեղ մեր աչքին դիմացը բաց կեցած է : Հոն յայնչափ ցեղապետութիւն բաժնուած ժողովուրդներ կային՝ ամենն ալ իրարու անհաղորդ , որ իրենց տոհմային անկախութիւնն ու ջօրութիւնը պահելու համար դրացի ժողովուրդները տկարացունել կը ջանային : Ասոնք յայնժամ իրենց խեռ և ըմբոստ հասակին մէջ ըլլալով և իրարու եղբայրակցութիւնը մոռացած՝ ոչ միայն իրարմէ զատուցեալ կենալը հարկաւոր կը համարէին իրենց էութեան , այլ նաև մէկմէկու մօտենալու առիթներն ալ բառնալու կը նայէին՝ նորանոր արգելքներ հնարելով : Շատ անգամ մի ազգին կրօնքը միւսոյն քաղաքականութեանը դէմ կը յարուցանէին , և այլ անգամ մի ազգին կրօնքը միւսոյ կրօնքին դէմ կը կռուեցունէին՝ միշտ իրենց տոհմին անկախութիւնը պահելու նպատակաւ : Այս ամենը հնարագիտութիւն էր ազգ ազգէ , ցեղ ցեղէ , ժողովուրդ ժողովուրդէ զատ և հեռի պահելու համար : Ասիոյ աշխարհին ընդարձակ թատրոնին վրայ կրօնքի և տոհմականութեան համար մեծամեծ և ողբաշարժ տեսարաններ ելան և երկայն դարերով տևեցին : Հոն կրօնքի և տոհմականութեան համար յարիւն եղբօր ձեռք քամել , արեան հեղեղներ վազցունել , և բազմախումն ժողովուրդներ յիրար անցած մահ տալով մահ առնելով իրարու արեան մէջ թաւալիլ ու դիակնանալ՝ անձնական քաջութիւն և առաքինութիւն և նահատակութիւն համարուած էր : Ուստի արևմտեան Ասիան կրնամք նմանցունել անհուն մեծութեամբ ծաւալեալ գերեզմանի մը , ուր տոհմականութեան և հաւատքի համար բնաբարձ եղած ժողովուրդները խառն ի խուռն իրենց յիշատակներով մէկտեղ թաղուած են :

Ասիոյ այժմու ժողովուրդները երբ երեսնին դարձուցին ու նայեցան անցեալը քննելու՝ չիկնեցան ու շառագունեցան , հիացան՝ թէ հաւատք և տոհմականութեան բերումը կրնայ յայս աստիճան վայրենութեան մղել մարդկային բանաւոր ազգը : Եւ անտի սոսկալով մը դարձուցին երեսնին այժմու ժամանակիս վրայ , ու տեսան իրենք զիրենք՝ հին ատենի հսկայ ժողովրդոց նշխարեալ ու նօսրացած կոտորակը՝ իբրև աւերակ եղած յրուած և անշքացած . յայնժամ անէծք կարդացին այն ժամանակներուն՝ ուր տոհմականութեան և հաւատքի համար եղբօր և եղբայրակից ազգերուն արեամբ չաղախիլը անձնական առաքինութիւն սեպուած էր :

Մտաց այս բնական շարժման վրայ ժողովրդոց սրտին մէջ հիմնական փոփոխութիւն եղաւ , հոն ծագեց ճշմարտութիւն մը , ու գոչեցին , « Մեք ժողովուրդք քրիստոնեայ անքրիստոնեայ մայր Ասիոյ որդիք ենք , ի բնէ իրարու եղբայր ենք , և ամենքս արի թագաւորաց որդեգիր ենք : Զկայ մեզի համար քաղաքայնելոյ յոյս՝ մինչև իրարու հետ չհաշտուինք և սերտ դաշնակցութեամբ չեղբայրանամք » :

Սրտից այս փոփոխութեան սաստար եղաւ Ազատութիւնն իտալիական արքային , որ իւր արքունի հրովարտակաւ ազատ ըրաւ ամեն հաւատք ու կարծիք : Այս աշխարհաքաղաքական հրովարտակը ազգաց մէջի հին ու աւանդական առելութեան ոյժը կո-

© National Library of Armenia

տրելով՝ ճամբայ բացաւ ամեն ազգի իրարու հետ հաշտուելու : Անոր 'ի վեր մահմետական , հայ , յունադաւան ասիացի , և այլ ժողովուրդք 'ի միտ առին արքայական վսեմ կամաց արժէքը , և սկսան վայելել ազատ և հանդարտ սրտի պտուղները . սկսան հասկանալ իրենց պարտքը առ ասիական աշխարհն և առ հայրագիր թագաւորը , առ մերձակայ ժողովուրդն ունենալու մեծարանքը , առ ամեն հաւատք ակնածութիւնը , և իւրայեղ ժողովրդեան համար ունենալու չանքն ու փոյթը :

Այսով ժողովուրդք իրաւ զարգանալու ճամբու մէջ մնան , բայց մտքերնին հաստատ դնելու են՝ որ մինչև դաշնաւորութիւն մը չհաստատուի ցեղով՝ հաւատքով՝ նախնական աւանդութեամբք իրարմէ զատուած ժողովրդոց մէջ , յայն երկիր քաղաքականութիւն մնայել դիւրահնար չէ : Դարձեալ՝ երբ այլասեռ ժողովուրդք խառն բնակած են , բայց հայրենի սովորութեամբ իրարու անհաղորդ են , այն երկրին քաղաքական զարգացումը դժուարահնար է : Դարձեալ՝ ժողովրդոց դաշնաւորիլը որչափ յապաղէ , այնչափ աւելի ալ կ'ուշանայ նոյն երկրին քաղաքական զարգանքը :

Օսմանեան այժմու վհատուած արքայն այս ըսածիս ստուգութեանը նախադէպ ըլլալով , ոչ միայն իւր գահակալութեանց մէջ յայտնի և որիշ խօսքերով նոյնը հրապարակաւ հաստատեց , այլ և ուղեց ամեն ազգի և ցեղի մարդիկ իրարու հետ ընտելացունել ու մի զանգուած ընել . և սոյն վախճանին դիւրաւ հասնելու նպատակաւ կանչ ըրաւ՝ որ ամեն իրեն հպատակ ազգերէն ընտրուին կարող անձինք և մուծանին 'ի Բարձրագոյն ատեանը , և գաւառաց մէջ ալ օսմանեան ազգին հաւասար նստին դատողական ատեաններու մէջ : Բայց աստի հիմնեց և հիմնելու վրայ է նաև վարժատուններ , որպէս զի անխտրաբար ամեն ազգէ ժողովածծ երիտասարդք հարկաւոր ուսմանց հետ միատեղ ուսանին՝ իրարու դէմ ունեցած նախապաշարմունքները 'ի բաց դնել , իրարու հետ եղբայրակցիլ , և մի երկրի՝ մի հայրական թագաւորի որդեգրութիւն հաւասար վայելել : Արդ կրօնքի ազատութեան , հաւասարութեան , և ժողովրդոց դաշնաւորութեան մեծ սկզբունքը՝ Ասիոյ քաղաքականութեան հիմը՝ դրուեցաւ :

Դաշնաւորութեան պայմաններն են , նախ՝ ազգ ազգի և ժողովուրդ ժողովուրդի դէմ ունեցած ժառանգական ատելութիւնը 'ի բաց դնել :—երկրորդ՝ դրացի ժողովուրդք ուսմանց և քաղաքային կրթութեանց մէջ զարգանալու համար փոփոխակի իրարու ձեռն տալ . քանզի այս փոփոխակի պարտաւորութեան վրայ կեցած է երկրի մը դիւրաւ բարգաւաճիլը . վասն զի ազգի մը առանձնական ոյժը ինքզինք կրթելու չբաւէր՝ քանի որ իւր հետ խառն բնակած ժողովուրդ մը իրեն յառաջադիմութեան արգելք կ'ընէ կամ ուղղակի կամ յետամնայութեամբ : Ազգ մը քաղաքականութեան անհուն շահաւորութիւնը վայելելու համար պէտք է որ մերձաւոր ազգաց հետ ունենայ յարաբերութիւն առևտրական՝ արուեստական , դրական և կենցաղական : կարելի չէ որ երկու անհաւասարապէս զարգացած ժողովրդոց մէջ այս յարաբերութիւնը դոյանայ : — երրորդ՝ գիտնալու է , որ ժողովուրդ մը որչափ փութով մտնէ 'ի ճանապարհ քաղաքականութեան և անոր մէջ յառաջէ , դրացի ժողովուրդին զարգանքն ալ այնչափ աւելի կը դիւրանայ : — Չորրորդ՝ մի ժողովուրդին չզարգանալը ամեն մերձաւոր ժողովրդոց բարգաւճելուն արգելք է :

© National Library of Armenia

Որպէս զի Ասիոյ քաղաքակրթութիւնը չյաջողի, պէտք է որ մէջի ազգերը իրարու հետ հաշտուելէն ու դաշնաւորելէն եռև ջանան ամենէն առաջ իրենց արենակիցքը կրթելու. վասն զի այս ազգային բերումը բնական ու օրինաւոր է, և Եւրոպայի այժմու ազինք այս ազգասիրական ոգւով է որ քաղաքակրթեցան։

Ազգ կամ տոհմ ըսելով կը հասկնանք այն ժողովուրդը՝ որ նախահաւէ մը առաջ եկած է. և իւր առանձնութիւնը ամեն ատեն պահելով և իւր նախահաւուց երկրին վրայ երկայն կեանք անցունելով բաղդաւորութիւն ու չարաբաղդութիւն, և ինչ որ անցաւորիս կը պատկանի՝ կրած է։ Ամեն ազգ ունեցած է իւր տագնապի՝ փառքի՝ աճելու և նուաղելու օրերը և իւր պատմական և կենցաղական յիշատակները։ Ժամանակ եղած է, որ իւրև սուրբ տապանակ՝ ընդունարան եղած է առաքինութեան և հանճարոյ. ժամանակ եղած է որ քիրան թափած է ազգին բարեկեցութեանը համար. և դարձեալ ժամանակ՝ որ արիւն հեղած է իւր ազգին ազատութիւնը և անկախութիւնը պահելու համար։ Այսպէս ամեն ազգ իրենց նախնեաց յիշատակովը կը մնանին ու կը պարարին։ Նախնեաց յիշատակովն է, որ արենակիցք սեղմ իրարու հետ փաղանգեալ կը մնան։ Այս բնական զգածումը հիմն և առիթ եղած է դիւրաւ քաղաքակրթելու։ Նախնեաց յիշատակներուն վրայ ամրացած է ազգայնութիւն՝ ազգասիրութիւն և ազգային հոգի ըսուածը։ Ազգային ոգի ունող մարդը իւր գլխաւոր մտածութիւնքը իղձը և գործը առ ազգն կը վերաբերէ. իւր արենակցաց փառքին փառաւորակից կ'ըլլայ և չարակրութեանցը հետ մէկտեղ չարակիր։ Ազգային հոգի ունող մարդը հարազատ որդւոյ կերպարանք ունի. կը մտածէ՝ թէ այն որ յազգէ է, ազգին կը պատկանի, և ես գլխովին ազգին եմ։ Անգամ մը ազգէ ըլլալէն եղբը անոր չպատկանիլ՝ հարազատ որդւոյ համար կարելի չէ։ Ազգին փառքը՝ պատիւը՝ բարի համբաւը իրեն երանութիւն կը համարի, անոր անչքանալը իրեն թախծութիւն, և անոր նեղութեան ու պիտոյքի առեն՝ օգնելու հնարք կը խնդրէ։ Եթէ այս օգնելու զգածումը կարի հզօր է մարդոյ սրտին մէջ, նա մինչև իւր ամեն ինչքը, անձը և կարողութիւնը բովանդակ կը նուիրէ յօգուտ ազգին։ Ինչպէս մարդկային ըղձից զգածման և ըմբռնման չափ դնել անկարելի է, այսպէս և թափոյ ազգային բերման սահման գծել անհնար է։ Որչափ ուժգնութեամբ զգայ ոք, այնչափ աւելի կ'ըղձայ. որչափ աւելի ըղձանայ, տակաւին յոյժ շատ աւելի ըղձալիք կը գտնէ։ Այլ կերպ կը զգայ մեծ ազգը՝ այլ փոքրը. այլ կերպ կը զգայ քաղաքական բարեզարդութեամբ յզփացեալ և լուսաւորեալ ժողովուրդը՝ այլ դեռալոյսը. այլ կերպ կը զգայ ըմբռատ ժողովուրդը՝ և այլ հլու և հպատակ ժողովուրդը։ Մեր այժմու ազգը արդէն փոքր՝ դեռալոյս՝ և 'ի բնէ հլու և խելօք, իւր զգալիքն ալ սա գլխոց մէջ բովանդակելի են։ Ամեն բանէ առաջ բարոյական կրթութիւնը՝ որ քաղաքականութեան հոգին է՝ ընդհանուր ծաւալել, և անով ժողովրդեան բարքը ուղղել, առաքինութիւնը յարգել տալ։ Բ. Մտաւորական վարժից մէջ ծայրանալ։ Գ. Այն որ ազգին սեպհական է, զայն իրրև ազգութեան դրօշմ պահել։ Դ. Նախնական լեզուն և ազգային գրականութիւնը մշակել։ Ե. Ազատանձնութեան դիէն ամեն ազգաց հետ հաւասարակից ըլլալ։ Զ. Այլ ազգաց նման ամենավաճառ տուրհառութեան իրաւունք ունենալ։ Է. Արուեստական գործոց և ճարտարութեան և միջակութեան մէջ այլ զարգացեալ ժողովրդոց կարգը մնալ։ Ը. Քաղաքական ամեն

© National Library of Armenia

բարգաւաճանաց մէջ այլ բարեկիրթ ժողովուրդներէ յետնեալ չմնալ։ — Այս է ահա մեր լմնցած ազգայնութիւնը և ազգին համար ընելի չանքերնիս։ Քանի որ ազգը զմեզ իւրացուցած է՝ և մեք զազգը մերացուցած, կը պարտաւորիմք իբրև արենակից իբրև բաղդակից և իբրև չարչարակից՝ ձեռն տալ անոր ըստ վերոգրեալ պայմանաց։

Բարոյական և քաղաքական տնտեսութիւն։

(Տես Հա. ԻԶ, երես 325)

Դ· ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարդուս պիտոյքը հիմն են ընտանեաց և ընկերոջեան, և պատճառ ամենայն օգտակար իրաց աշխարհի։

Հնձոց պատճառած անհանգստութիւնը տագնապի փոխուեր էր. ամենքն առ հասարակ գիտէին ու չէին տարակուսեր թէ բովանդակ Գաղղիոյ մէջ անյաղող եղեր էր և նաև Եւրոպայի մէկ մասին մէջ. երկրին մէջ եղած ցորենը ինչուան գալիք տարւոյն հնձոց ժամանակը բաւեցնել ամենքը անկարելի կը սեպէին, և մերձաւորաց վրայ յոյսերնին չդնելով՝ կը սկսէին վախնալ իբրև թէ պիտի չկարենային իրենց երկիրը ցորեն բերել տալ։

Խուլ չկնկոց մ'է տիրեր էր արդէն քանի մը նահանգաց մէջ, բայց դեռ ևս չէր հասած այն գաւառն ուր էր Միրըպոյ, վասն զի շատ տեղերէ աւելի քիչ նեղութիւն քաշեր էր։ Սակայն տհաճական խօսակցութիւններ հոն ալ բերնէ բերան կը պարտէին. կը խօսուէր թէ ինչպէս շատ տեղ չրլահայեցութեամբ արգելեր էին որ իրենց երկրէն դուրս ցորեն չելլէ։ Ցորենի վաճառականաց և հաշուէդիտաց (spéculateur) վրայ եղած սովորական խօսակցութիւնները կարդէ դուրս յաճախ կը լսուէին և ամենուն բերանն ինկած էր մենավաճառ (accapareur) բառը։ Ամեն մէկ ոճնավաճառ ըլլալուն յուզմունքն աւելի կ'աճէր և կը վախցուէր որ դաշանց թղթերուն ազատութիւն չչնորհուի։ Արդէն շատ նահանգաց մէջ խառնակութիւնք ծագեր էին ցորենի տեղափոխութեան պատճառաւ. և այս նկատմամբ եղած ձայներն ըստ սովորութեան բերնէ բերան անցնելով կը մեծնային։

Տիւրբէ անձկանօք կը դիտէր ցորենի գնոյն բարձրանալէն ծագած արդիւնքը. այս գնոյն բարձրանալը՝ զոր չափազանց վախը կանխել տուեր էր, քանի մը նկատմամբ չահաւոր է, ինչպէս որ ըմբռնած էր նաև սրամիտ բժիշկը. բայց միանգամայն զրգռմունք կը պատճառէր, որ կրնար օր մը հրապարակական խռովութեան և անընդհատելի կրից փոխուիլ։

Այս պարագայիս մէջ կ'ուրախանար իր խօսակցութեանցը՝ Միրըպոյի բնակչաց մէկ մասին վարժութիւն մ'եղած ըլլալը տեսնելով. կրնայ ըսուիլ թէ աւանին քան զամենքն աւելի մտաբայ անձինքը ձեռքին տակն ունէր, որոնցմով կը յուսար միայած ժողովուրդը խափանել որ աղետից ժամանակ չատ անգամ տգիտութեան պատճառած վրիպակները չգործեն. պարագայից ծանրութեանը համեմատ կ'ածէր նաև ժողովրդեան կողմանէ ալ իրեն խօսակցութիւնները լսելու փափաքը. կարծես թէ խորհրդոցը մտիկ ընելով օգնութիւն գտնել կը յուսային. ուստի երբ դահլիճը մտաւ՝ հաճութեամբ մեծաւ տեսաւ որ ուրիշ կիրակիներէն չատ աւելի լեցուն էր. և այնչափ խուռն ամբոխը բարի դուշակութիւն մը համարեցաւ։

— Ազնիւ բարեկամդ իմ, չեմ կրնար ըսել եթէ ուրչափ զգացուած եմ

© National Library of Armenia

այս չրջափակիս մէջ խռնեալ բազմութիւնը տեսնելով։ Ջեր ցուցած վըստահութեամբը սիրտ առած՝ պիտի չանամ նաև սուտ չհանելու գայն՝ տալով ձեզի ՚ի սիրոյ բղխեալ և իմ հինօրեայ փորձովս ստացած խորհուրդներս։

Ցուցուցի ձեզի թէ այս աշխարհիս վրայ բարին ամենուրեք կից առ կից է չարին, և թէ բարին շատ աւելի է քան զչարը, թէպէտ և մենք հասարակօրէն հակառակը կը մտածենք. ցուցուցի նաև ձեզի որ բարին ձրի չնորհեալ է մեզ յԱստուծոյ, երբ չարեաց մեծ մասը, և չափազանցութիւն չէ՝ եթէ ըսելու ըլլամ տասնին իննը, մեր տգիտութենէն կամ զեղծմունքեն կը պատճառին, մեր նախատեսութիւն չունենալէն և կամ ՚ի կրից. և մենք ենք որ կը ծանրացնենք մեր վրիպակաւը մեր վրայ եկած չարեաց հետևանքը։ Ուրեմն խոհեմութիւն և արիասրտութիւն ունենանք. ամենայն ինչ ինչպէս որ են այնպէս տեսնենք և անոնցմէ առաջ եկած հետևանքը դիտենք։

Մարդկային բնութեան վրայ ինչ կարծիք ալ ունենալու ըլլանք, անժըխտելի է պիտոյք ունենալը։

— Աբդէն իսկ յայտնի է, գոչեցին Ժարլան, Ռնօրիոս, Միքայէլ, Անտրէաս Լէոնարտոս, Վինկենտիոս և այլք ոմանք։

— Համոզեալ եմ որ դուք ալ ինծի պէս այս բանս գիտէք, պատասխանեց Տիւբրէ. բայց որովհետև այս նիւթոյս վրայ ես աւելի մտածած եմ, կարելի է թէ աւելի կը հասկնամ ասկէ առաջ եկածը։ Մարդս պէտք ունի, և իր էութեանն առաջին պայմանն է հոգալ զայն. կեանքը պահելու համար՝ պէտք է որ մարմնոյն ամեն օր կերակուր մատակարարէ. մերկ կը ծնանի և ծածկուելու համար զգեստի պէտք ունի, օթևան մը՝ ուր ապաւինի, և վառարան մը՝ ուր անդամները չեռուցանէ։ Այս կերակրիկը, զգեստն ու բնակութիւնն հայթայթելու համար պէտք է որ աշխատի, նեղութիւն յանձն առնու և ճըգնի մտօք և մարմնով. այսպէս կը բերուինք մենք աշխատութեան և նեղութեան պարտուց, առանց որոց բան մը կարելի չէ ստանալ։

— Այդ աղէկ գիտենք, ըսին դարձեալ նոյնները։

— Համբերութիւն, բարեկամքդ իմ. թերևս ծնացորդն այնպէս լաւ չէք գիտեր։ Մարդս պիտոյից լծոյն տակ ընկճուած՝ որ նեղութիւն մ՚է՝ չիկրնար անկէ ազատիլ առանց աշխատութեան լծոյն տակ ընկճուելու, որ դարձեալ նեղութիւն է. վասն զի Աստուած բաւ առաջին մարդոյն քու հացդ ճակտիդ քրտինքովը պիտի ուտես։ Այսպէս երկու կողմանէ ալ նեղութիւն կը գըտնենք։

— Մենք ալ այսպէս կը մտածէինք, գոչեցին հանդիսականներէն ոմանք. բայց, Պ. Տիւբրէ, գիտես որ այս բանս մխիթարական չէ։

— Համբերութիւն, բարեկամքդ իմ. հիմա մխիթարութիւնը կը տեսնէք։ Պէտքն երբ կը կրենք՝ նեղութիւն մ՚է, բայց երբ կը լեցընենք այն պէտքը՝ կ՚ըլլայ վայելք. այսպէս սաստիկ քաղցած ըլլալով միայն հաց իսկ կերած ժամանակնիս վայելք կը զգանք. նոյնպէս վայելք կը զգանք սաստիկ պապակած ժամանակնիս ականակիտ աղբիւրէ մը ծարաւնիս յագեցնելով. երբ յոգնած կամ ցրտէն լկուած տուն կը մտնենք, կրակին բարեխառն ջերմութիւնը բարեկեցութեան զգացմունք մը մեզի կը պատճառէ. մեզի սիրելի եղող էակներն ալ աժնուելնէս ետև, զանոնք կրկին տեսնելու հաճոյքն՝ ամենաքաղցր վայելք մեզի կը պատճառէ։

Կը տեսնէք, այս ցաւ ու տրտմութիւն պատճառող պիտոյքը մեզի համար նիւթ մը կ՚ըլլան չնորհակալ ըլլալու Աստուծոյ նախախնամութեանը որ անոնց հետ կապած է մեր վայելքը։ Ըսի ձեզի որ եթէ մեր մարմինը ցաւ չզգար՝ հաճոյք ալ չէր զգար. նոյնպէս նաև եթէ պէտք չզգայինք՝ հաճութեան մը պատճառած վայելքը չէինք կրնար իմանալ։ Այսպէս ահա բարին ՚ի չարէն կը ծնանի։

© National Library of Armenia

— Հիմա կը հասկընամ, ըսաւ Անդրէաս. բայց անձինք կան որոնց համար վայելք չատ աւելի դիւրին են, քան ինչ որ այլոց համար։

— Ամենատոյգ է ըսածդ, Անդրէաս. անոր համար ասոր վրայ ալ պիտի խօսինք. առենին կրնամ ձեզի ցուցընել որ մեծատանց ճոխութիւնը կարծուածին չափ մեծ չէ. որովհետև անհուն կերպով նուազ է իրենց զգացած պիտոյքը, անհուն կերպով ալ աւելի նուազ վայելք կը զգան։

— կը հաւատամ, ըսաւ Պնորիոս, երբ կը մտածեմ զգացած ուրախութիւնս՝ երկար ժամանակէ 'ի վեր փափաքելի եղած մէկ բանը հայթհայթելով իմ ընտանեացս. կը տարակուսիմ թէ հարուստները նոյնպիսի գոհութիւն մը ստէպ զգան։ Բայց առանց հանդերձ կենաց՝ առանց հաւատացման միայն տանջանք պիտի կրէին անոնք՝ որ իրենց պիտոյքը կարող չեն լեցընելու։

— Գիտողութիւնդ հիմնական է, Պնորիոս. բայց աս բանս կարծածէդ աւելի սակաւագէպ է։ Եթէ չատ մարդիկ կան որ նեղութիւն կը կրեն իրենց ապրուստը ճարելու, գոնէ չատ քիչ են անոնք որ չկարենան այսօրուան օրս իրենց ըմբռստ պիտոյքն ալ գոհ ընելու. այս բանս զանազանութիւն մ'ընելու կը յորդորէ զմեզ։

Կենաց ու ապրանաց համար անհրաժեշտ կարևոր պէտքն են ուտել, խմել, հագուիլ, բնակիլ և տաքնալ. ահաւասիկ կարևորը մարդուս համար. բայց այս կարևոր պէտքը կը փոփոխի ըստ տեղեաց և ըստ ժամանակաց։ Կերակուր, հագուստ և բնակութիւն որ բաւական են Յունաստանի և Հնդկաստանի քաղցը կլիմային տակ, բաւական չեն հիւսիսային ցուրտ երկիրներու մէջ. ուստի երկրի մը մէջ անհրաժեշտ պէտք եղածը՝ ուրիշ երկրի մը մէջ ալ նոյնպէս պէտք չէ. դեռ ուրիշ պատճառներ ալ կան որոնք զանազանել կուտան զպէտս։

Առաջիններէն մէկն է մեր երևակայութեան ազդեցութիւնը. համեմատեցէք վայրենի մը մեր քաղաքակացեալ երկիրներուն ամենէն աղքատ մարդուն հետ. ինչ տարբերութիւն առաջնոյն բաւական եղածին և երկրորդին անհրաժեշտ կարևորին մէջ։ Տեսէք նոյն իսկ մեր երկրին մէջ, ինչ զանազանութիւն այլևայլ վիճակի անձանց պիտոյիցը մէջ։ Ինչ որ քաղաքացի մէջ հարուստին համար անհրաժեշտ կարևոր կ'երևայ, համեստ թանգարին համար բարեկեցութիւն է. իսկ մեղի՝ գեղի մէջ բնակողացս համար՝ շռայլութիւն է։ Բարեկեցութիւնը չատ վայելելով պիտոյք կ'ըլլայ. նոյն իսկ աւելորդը կարևոր պէտք ընել կու տայ։

— Այս է ահաւասիկ ցաւալին, ըսաւ Տիւրուր. բնական պիտոյից վրայ ուրիշներ ալ կ'աւելցընենք որոնք մեր երևակայութեանը մէջ միայն էութիւն ունին, և ըստ հաճոյս զմեզ դրժբաղդ կ'ընենք։ Այսպէս ինչ փոփոխութիւններ տեսած չեմ տղայութենէս 'ի վեր մեր ապրելու կերպին մէջ։ Առենք մէկ խուցով հիւղ մը բաւական էր ընտանեաց մը համար. հիմնական ժամանակս գոնէ երկու իրեք խուց ունեցող պզտիկ տուն մը պէտք է։ Քանի տարի առաջ ամեն մարդկանց գործածածը սանդալ էր, և միայն ձմեռը ոտուընին դուրսպայ կը հագնէին. հիմա ամեն եղանակի մէջ դուրսպայ կը հագնին և ամեն մարդիկ կօշիկ կը գործածեն։ Կիրակի և տօնօրեր երկայն զգեստներ վրանիս կը կրէինք. հիմա հազիւ երիտասարդ գործաւոր մը կը գտնես որ լօդիկ մը կամ զգեստ մը վրան ձգած չըլլայ։ Տղայութեանս ժամանակ մեր կանայքը բամբակեղէն կտաւներով կը զարդարուէին. իսկ այսօր Հնդկաստանի ծաղկեայ բամբակեղէնները կը հագուին և կիրակի օրեր իրենց համար մետաքսեղէն կամ մէրինոս պէտք է. այն տեն ոտքնի ճրագներ կը վառէինք. հիմնականս ժամանակս ճրագներով գոհ չենք ըլլար. բազմանկեայ լապտերներ պէտք են. քիչ առնէն կաղ ալ պէտք պիտի ըլլայ։

— Իրաւունք ունիք, ըսաւ Անդրէաս.

© National Library of Armenia

ասիկա հաւաստի նշան է թէ լուսոյ կուսակից ենք։

— Եւ թէ ճրագ մարելու դործիները չենք սիրեր, կսեց չարաճճիութեամբ վիէոլէն։

— Շատ ճշմարտութիւն կայ ըսածիդ մէջ, պ. Տիւրուբ, սկսաւ ըսել դարձեալ բժիշկը. ատոդ է թէ մեզի պէտք ստեղծելով՝ զանոնք լեցընելու համար նեղութիւններս կը չատցընենք։ Աղէկ է դիւտեր դանել և չատցընել պիտոյքներս հոգալու միջոցները. այս պիտոյքը դիտութեան զարգացումէն աւելի երագ ընթացք ունին. իղձք աւելի չուտ կ'աճին քան զվայելս. այսպէս աւելի բարեկեցութեամբ ապրելու և երջանիկ ըլլալու համար անհնազէս աւելի միջոցներ ունենալով, թերևս քան զմեր հայրերը նուազ երջանիկ ենք։

Այս ամենն ալ իրաւ է, և սակայն չարը փափաքանաց մէջ չէ՝ այլ միայն մեր տրամադրութեանը մէջ որ ամեն փափաքածը պէտք կը սեպէ։ Ըստ ինքեան մեր իղձերը բարիք են, և սըրտերնուս մէջ տնկուած են անոնք իբրև միջոց մը վիճակնիս լաւցընելու. և արդարև իսկ բարելաւութեան փափաքները պատճառ եղած են աշխարհիս սկիզբէն 'ի վեր ինչուան հիմա երկրիս վրայ եղած յառաջադիմութեանց. ըստ այսմ մարդ կը ստեղծանէ, կը բազկացնէ, կը հնարաւորէ և դիւտեր կը դանէ, որոնց վախճանն է մեզմէ ամենէն նուաստագունին ալ դիւրութիւններ չնորհել, որ երբեմն միայն սակաւաթիւ անձանց վերապահեալ էին։

Մեր փափաքները նաև միջոց են որով նախախնամութիւնը մեզի ընդունելի ընել կու տայ աշխատութիւնն, առ որ դատապարտեալ ենք։ Նորանոր պէտքեր լեցընելու՝ նոր ջանքեր կ'ածելցընենք. պիտոյք աճելով խթան մը կ'ըլլան մարդկանց համար այն աստիճան՝ որ առաւելագոյն պիտոյք ունեցող ժողովուրդները մեծագոյն յառաջադիմութիւն ընողներն են։ Այսպիսիք նաև իրենց պէտքը դիւրագոյն կերպով հաճեցնելու կերպը կը գտնեն, մինչդեռ սակաւապէտ ժողովուրդք առհասարակ յետամնաց են, չանալու աշխատելու քիչ դրդիռ ունենալով։ Կ'ըսէ բռնէք ուրեմն արդ մարդուս ըղձից օգտակարութիւնը, և թէ ինչպէս նախախնամութեան ձեռքին մէջ միջոց են մեր վիճակն աշխարհիս վրայ լաւցընելու։

Հիմա ալ պիտի ցուցընեմ ձեզի փոփոխութիւններէ ծագած ուրիշ չահերը որոնց վրայ կը դանգատիք. միթէ այս փոփոխութիւններով մեր մէջը բարուց և բնաւորութեանց մեծ փոփոխութիւն մ'եղած չէ. արդեօք տուներուն մեծաչէն ըլլալէն ետքը՝ որով մարդիկ ոչ ևս այլ անասնոց պէս խառն 'ի խուռն կը բնակին, բնաւորութիւնք չէն կակղացած ու անուշցած. և քանի որ բնակութիւնք աւելի հանգիստ եղեր են և օգտակար բաներով ճոխացեր են, միթէ մարդիկ աւելի տնասէր ու բնասնեսէր չէն եղած։ — Այս խօսքին վրայ բաստըմաը ու պասսէ չարժմունք մ'ըրին, որով յայտնի կ'ընէին թէ ինչպէս այս փոփոխութիւնն իրենց չահուն հակառակ է։ Տիւբրէ՝ չտեսնելու զարնելով, խօսքը շարունակեց։

— Իրաւ է թէ ոմանք չատ ծախք կ'ընեն զարդարանքի համար և կը ցաւիմ այդ զեղծման վրայ. բայց միթէ ընդհանուր մարդիկ աւելի գործունեայ, մաքրասէր և խնամոտ եղած չէն։ Ստոյգ է դուրսայ և ներսնայ կը հագուինք, բայց քիչ կապերտ ու կարկերտան կը տեսնեմ. փոխանակ սանդալի՝ կօշիկ կը հագուինք, սակայն աւելի արագ կը քալենք և չատ աւելի գործ կը տեսնենք՝ քան ինչ որ երբեմն. ոտքինի տեղ ճրագը կամ ձէթը փոխանակեց. այլգիշերային մխիթարութեան փճախօսութեանց և ցոփութեանց տեղ չահաւէտ զբաղումներ և օգտակար ընթերցմանց հետ կ'ըլլանք։

— Իրաւունք ունիս, պ. Տիւբրէ. ուսոի ներսնին կը խնդրեմ տհաճութեան մը տեղիք տալուս համար, որուն պատճառ եղաւ ժամանակիս խստապահանջութեանը դէմ ելլող չտայլութիւնը։

© National Library of Armenia

— Ներումն խնդրելու բան չկայ, Պ. Տիւրուբ. ամենքը միաբդ աղէկ հասկըցած են։ Բայց ներէ ինծի որ ըսեմ թէ այս պիտոյից ծագումը օգտակար է նոյն իսկ նաև հացի կարօտութեան նկատմամբ ալ, ուսկից կը վախենք։—

Ընկերքը զարմանօք բացագանչութիւնները ըրին, որոնք շատ կ'ախորժէին միշտ ժամանակակից խօսակցութիւնները։

— Հիմա կը տեսնէք, յաւել Տիւբրէ. պիտի իմանաք թէ ինչպէս հացի կարօտութիւն մը՝ նաև ենթադրելով իսկ որ հայը 1816ի ժամանակին չափ սուղ նայ՝ անհամեմատ աւելի ձեղի քիչ նեղութեան պատճառ պիտի ըլլայ՝ քան ինչ որ նոյն ատեն։ Կը կարծուի թէ քաղաքակրթութիւնը որ մարդուս պիտոյքը կը չատցընէ՝ պէտք է որ զաղքատս թշուառադոյն ընէ, վասն զի անոնց համար շատ աւելի դժուար է իրենց պիտոյքը լեցընել. բայց սա բանս սխալ է։

Երբ աղքատները նուազ պէտք ունին՝ վայելքնին ալ ըստ այնմ քիչ է. բայց ասկէ՝ միջոց չունին հացի կարօտութեան ժամանակ, ինչպէս նաև վաճառականական վտանգաց մէջ և աշխատութեան 'ի կախ մնացած ատեն։ Երբ իրենց ապրելու կերպն ու սահմանն է իրենց անհրաժեշտ կարևոր պէտքը լեցընել, աւելի ստոր չիկրնար իյնալ. և եթէ աշխատութիւն կը պակսի՝ կամ թէ աղութիւն կը տիրէ անկէ, բացարձակ խեղճութիւն կը հետևի։ Եթէ միայն հաց է կերածդ ու խմածդ ջուր, ինչ կ'ընես եթէ միջոցդ պակսի, կամ թէ հացն որ սուղնայ։ Իսկ եթէ նուազ րութիւնդ է որ դինի, միս, խահֆէ, համեմունք և աղէկ զգեստներ կը դործածես, եթէ տուրքական ժամանակի մէջ կերպ կերպ դիւրութիւն ու հանդստութիւնդ ունիս, կրնաս այս ծախքերդ վերածել զքեզ անհրաժեշտ կարևորէն զրկելէն առաջ։

Ամանկ ահա երեսուն տարի առաջ Միրըպոյի մէջ միայն հաց՝ պանիր, կաղամբ, դեռևանէնոր և անպիտան տեսակ քանի մը պտուղներ կ'ուտուէին. հազիւ տարին մէկ անգամ միս կ'ուտուէր, և իբրև ըմպելիք չրախառն կծու դինի մը կը խմուէր. տուներուն մէջ եղածները քանի մը խեղճ անկողիններ էին, սեղանատախտակ մը, մէկ կամ երկու նստարան, դարան մը, ալիւրի տաշտ մը, մէկ կամ երկու սան, և ատոնց նմանի ուրիշ քանի մը կահ կարասիք. ասկէ ինչ կը հետևէր. ասով աշխատութիւնը կը պակսէր, կամ ցորենին դինը կը բարձրանար, որովհետև աւելորդ բան մը ոչ ոք ունէր ուսկից ինքզինքը կարենար զրկել. հացը՝ որ է անհրաժեշտ կարևորն՝ հայթհայթելը անկարելի կ'ըլլար և տոկալի սով կը կրէին։

Տեսէք ընդհակառակն այս տարուան ըլլալիքը. ցորենին դինը բարձրանալուն պէս, պիտի սկսիք զրկել զձեզ շատ մը բաներէ զոր հիմա կը վայելէք. օրինակի համար՝ պիտի թօթափէք այն ամենայն ծախքերը որոնք անհրաժեշտ կարևոր չեն. նուազ շաքար ու խահֆէ պիտի սպառէք և դինի քիչ պիտի խմէք. այսու հաց դնելու կարևոր տակը պիտի ունենաք. անշուշտ նուազ բարեկեցիկ պիտի ըլլաք, սակայն կարևորը պիտի ունենաք։

— Տեսէք թէ ինչ զարմանալի բան է, գոչեց Տիւրուր. ես մարդկանց պիտոյից չատութիւնը չարիք կը սեպէի. չնորհակալ եմ տուած դասիդ համար, Պ. Տիւբրէ։

— Մենք ալ նոյնպէս, գոչեցին բազմութիւն մարդկանց, որոնց հացի նուազութեան նկատմամբ ունեցած վախը՝ բժշկին ըրած բացատրութեամբն ըստ բաւականի կը փարատէր։

— Ուրախ եմ, բարեկամքդ իմ, որ ըսածովս աւելի հանդարտութեամբ կը սկսիք մտածել եղածին վրայ։ Հաւատացէք ինծի, որչափ աւելի մեր խօսակցութիւններն առաջ տանինք, այնչափ ևս առաւել պիտի զարմանաք այս աշխարհիս իրաց զարմանալի կարգաւորութեանը վրայ։ Ուսոի ընկերութեան էութիւնը կը կայանայ մարդկանց պի-

© National Library of Armenia

ժողքին լեցընելու համար իրենց ան-
ձանց ծառայութիւններ մատուցանե-
լուն վրայ. և այնպէս կանոնաւորեալ
է ամենայն ինչ որ ամենքնիս ալ մեր
պէտքը լեցընելու համար ուրիշի ճգան-
ցը կարօտ ենք։

— Ի՞նչ, գոչեց Վինկենտիոս Ցու-
նիէ. միթէ աշխատութեամբս չէ՞ որ
ինծի ամեն պէտք եղածը կը հայթհայ-
թեմ։ կարծեմ թէ իմ ձեռքէս ալ քիչ
մը բան կու գայ։

— Իրաւ է, Վինկենտ, որ աշխա-
տութեանդ եկամուտովը կը գնես քեզի
պէտք եղածը. բայց ըսէ ինծի, միթէ
դուն ես հացդ, զգեստդ ու կօշիկդ գոր-
ծողը. ո՛վ է ցորեն, միս ու գինի մշու-
ցանող ընդեղէնները ու տաքցընող
փայտը բերել տուողը, կանեփն ու
բուրդը որոնցմով զգեստներդ կը շի-
նուին։ եթէ այլք չաշխատէին այս ա-
մեն բանները բերել տալու, կը գտնէիր
պատրաստ ամեն բան երկաթդ դարբ-
նելով։

— Ճէ, իրաւ է։

— Կը տեսնես ուրեմն որ եթէ դուն
ես որ աշխատութեամբ պիտոյքդ կը
նախատեսես, այլոց աշխատութեամբը
կրնաս այս պիտոյքդ լեցընել։ Այսպէս,
Վինկենտ, կարելի է թէ քու դարբնած
երկաթդ հեռաւոր կլիմաներ կ'երթայ
երկրի մը բնակչաց՝ որոնց և ոչ անունը
լսած ես, պէտքը լեցընելու, և որոնց
աշխատութիւնը քեզի չափար՝ բամբակ
և ուրիշ դիւրութիւններ կը մատակա-
րարէ զորոնք չէիր կրնար հոս յառաջ
բերել։

Մեր պէտքը նաև զմարդիկ և զժո-
ղովուրդս շաղկապող կապ մ'են. ապրե-
լու համար ամենայն երկրի մարդկանց
աշխատութեանը պէտք ունինք. մեր
կերակուրներն համեմող աղը Ովկիա-
նոս կամ Միջերկրականի ծովափանց
վրայ ծովէն հանուած է. մեր չափարը՝
ճակնդեղին ըլլալովը հանդերձ, տակա-
ւին մեծաւ մասամբ Անդիլեանցմէ կու
գայ. խահֆէն Մարդինիքէէն կամ Պուր-
պոնէն կու գայ. թէյը՝ Չինաստանէն է.
պղպեղն և այլ համեմունք՝ Հնդկաց ով-
կիանոսին մէջ եղած Մոլուգեան կղզի-
ներէն. բամբակն ալ՝ որ մենք հիմա
այնչափ շատ կը գործածենք՝ Միացեալ
Նահանգներէն կ'ելլէ։ կը տեսնէք՝ աշ-
խարհիս գրեթէ ամեն երկիրները մեզի
կ'օգնեն։

— Բայց, ըսաւ ան ատեն Վիէոլէն,
միշտ առարկութիւններ ընելու աչխու-
ժով, միթէ ցաւալի բան մը չէ՞ որ բնու-
թեան պարգևներն անոնց կարօտ ե-
ղողներէն շատ հեռու գտնուին։ Այս-
պէս քահֆէն, թէյը, համեմունք՝ որոնք
ցուրտ՝ կամ ինչպէս մեր բարեխառն
կլիմային մէջ շատ օգտակար են, աւե-
լի տաք երկիրներ կը բուսանին ու կ'աճին։
Շատ հիւանդութիւններ կը ծագին Ե-
րոպայի մէջ՝ մինչդեռ դեղը հազարա-
ւոր փարատներով հեռու է։ Հրա-
մանքդ բժիշկ ըլլալով ինծմէ աւելի
աղէկ գիտես, Եւրոպայի ժողովրդոց
տանջին մէկը ջերմէ կը մեռնին, և ա-
նոր առջևն առնող քինինը Ամերիկայէ
ծառէ մը կը հանուի։

— Իւս առաւել պէտք է օրհնել զԱս-
տուած, պ. Վիէոլէն, որ այսու կապ
մը հաստատեր է ամենայն մարդկանց
մէջ. առանց այս կարևոր և դիւրու-
թեան պէտքերը՝ զոր ոմանք եղծմանն
կը տանին և ուսկից այլք բոլորովին
զուրկ են, փոխոխակի իրարմէ գտնե-
լու, ժողովուրդք մէկմէկու անծանօթ
և օտար կը մնային։ Արդ որչափ որ վե-
րաբերութիւնին յաճախէ՝ այնչափ ա-
ւելի չահաւոր կ'ելլեն. այս բանս օրի-
նակով մը ձեզի կը հաւաստեմ։

Մինչդեռ օդոց անբարեխառնու-
թեամբ՝ ինչպէս այս տարի, շատ տե-
ղեր հունձք կը փճանան՝ պակասած ցո-
րենը շատ հեռու երկիրներէ կրնայ բե-
րուիլ. բայց անանկ հեռաւոր տեղեր
երթալու համար և մեզի պէտք եղած
ամբողջ ցորենը բերելու համար, հա-
զարաւոր մեծամեծ նաւեր կարևոր են.
արդ այս նաւերը քանի մը օրուան մէջ
չեն կազմուիր. նոյն իսկ չեն կրնար
միայն մէկ դիպուածի մը համար շի-
նուիլ, վասն զի ծախքն այնչափ աւելի
կ'ըլլայ ցորենի գինէն՝ որ չկրնար ըլ-

© National Library of Armenia

լուիլ։ Ի՞նչ պէտք է ընել ուրեմն. սովորութիւն ունենալ տուրհատութիւն ընելու ամեն ժողովրդոց հետ, կանխաւ դիտնալու համար թէ որո՞նք տալիք աւելի ցորեն ունին, և պէտք եղած ժամանակը կարենալ իսկոյն այս ծառայութեան նուիրելնաւերը։ Ահաւասիկ այս բանս մենք դեռ ինչուան հիմա չգիտցանք ընել, բայց ապահով եղէք որ այս եղածը մէյմ՛ալ չկանդիպիր, վասն զի փորձով առած դասերնիս օգտակար կ՛ընենք։

Օրհնենք ուրեմն զԱստուած այս պիտոյից համար, որոնք մարդուս համար առիթ են իր էութեան մտաւորական մասը յայտնելու. վասն զի ինչ են ուսումնական ամենայն գիւտք և ճարտարութեան ու արուեստից մեծամեծ աշխատութիւնք՝ որոնց վրայ մտածելը կը չփոթէ զմեզ, եթէ ոչ մարդկային հանճարոյ արդիւնք՝ իր պիտոյքն հայթհայթելու փափաքէն յորդորեալ։ Մարդս կ՛ամբաստանէր զԱստուած դարեր ի վեր, որ անթիւ միլիոններ առլիը պարզած էր նուաղ ներելութեամբ իր պէտքը լեցընելու համար. մարդուս համար պատրաստեր էր ջրոյ, հովու, շոգիի, ելեկտրութեան, լուսոյ մէջ՝ անթիւ գործիչներ ու վարիչներ, որոնք կրնան իրեն ամենէն հասարակ ու թանձր աշխատութիւնները ալ ինքնին կատարել. ի ծառայութիւն մարդուս պարգևեր էր բնութեան զօրութիւններըն և չէր գիտեր զանոնք ի կիր առնուլ։

Աստուած ուզեց որ բնութիւնն և մարդկային աշխատութիւնը մեր պէտքը լեցընելու օգնեն. որչափ աւելի մարդուս միտքը կը յառաջադիմէ, այնչափ աւելի մեր պէտքը կարևոր չանիւք լեցընելու համար մարդկային աշխատութեան համեմատութիւնը կը նուազի. և ընդհակառակն աւելի ևս բնութեան աշխատութիւնը կ՛աճի։ Մեքենայից օգնութեամբ հեռագիտէ շահաւորագոյն կ՛ընենք անասնոց և բնութեան ուժն, և իրենց կատարել կուտանք մեր աշխատութեան ծանրագոյն մասերը։

— Ես երբեք այս բանս չեմ տեսներ ըսաւ Ժարլան. երկիր բանիլը բաւական՝ նապէս՝ ինչպէս որ է, դժնեայ կը գըտնեմ։

— Իրաւունք ունիս. պ. Ժարլան, բայց այս աշխատութիւնը շատ աւելի դժնեայ էր երբեմն, մինչդեռ մարդիկ ամենայն ինչ իրենց բազկաթը պէտք էին ընել. մինչդեռ ոչ սայլ ունէին և ոչ բնաւ մէկը այն հանճարեղ գործիքներէն՝ զորս կը գործածես։ Իսկ եթէ տակաւին երկրագործութիւնը խիստ է և դժնդակ, պատճառն ան է որ մարդիկ իրենց մտաց ուժը այն կողմը չեն բևեռած. բայց արդէն իսկ ահաւասիկ քանի մը մեքենայք գտնուած են որոնք ձեր ծանրագոյն աշխատութիւնները կը կատարեն, և ձեր տեղը ցորենը կը ծեծեն, կը քաղեն ու կը հնձեն։

— Տէր Աստուած, ինչ պիտի ըլլայ մեր վիճակը, դուք եցին ան ատեն դահլճին մէջ եղող վարձուորները. միայն աս պակաս էր զմեզ անօթի ձգելու համար։

— Մի՛ վախնար, բարեկամդ իմ. ահաւասիկ ես կ՛ապահովեմ զձեզ՝ որ աշխատութիւններդ նուաղ պիտի ըլլայ, և ոչ օր մը առանց գործոյ պիտի մնաք։ Ձեմ կրնար հիմա ապացուցանել ձեզի այս բանս, բայց խօսքիս հաւատայէք ու սպասեցէք։ Բոլորով սրտիւ համոզուեցէք որ նոյնչափ աշխատութեամբ աւելի հանգստութիւն և դիւրութիւն կըրնանք հայթհայթել մեզի՝ քան ինչ որ երբեմն. վասն զի մարդկային հանճարոյն զարգանալովը՝ բնութեան աշխատութիւնը մեծաւ մասամբ մեր ամեն ըրածին մէջ կը մնայ։ Ամեն օր նոյնչափ պիտի աշխատինք՝ բայց աշխատութիւններնիս նուազ դժնեայ պիտի ըլլայ։

Արդ թողէք որ դիտել տամ ձեզի նաև թէ ինչպէս մեր պիտոյքն ընկերութեան հիմն կ՛ըլլան։ Տեսաք որ այն պէտքերը չենք կրնար յագեցնել՝ բայց եթէ աշխատութեամբ այլոց. քիչ մը եաքը պիտի տեսնէք նաև որ ամենայն ինչ աշխատութեան կը վերածուի այս

© National Library of Armenia

աշխարհիս վրայ : Երբ կը գնենք կամ կը ծախենք՝ միշտ մէկու մը գործած կամ յառաջ բերած բանն է , ուր և իցէ աշխատութեան մը բերքն է : Երբոր կ'ուզենք ծախել կամ գործել , պէտք է որ մեր ծախածին ու գործածին պէտք ունեցող անձինք գտնենք : Եթէ աշխատելու պէտք ունինք՝ պէտք է մէկը գտնել որ պէտք ունենայ մեր աշխատութեանը : Հետևաբար՝ որչափ աւելի մարդիկ պէտք ունին՝ որով աւելի ևս կրնան գնել ու աշխատցընել, այնչափ աւելի ալ կրնանք մեր աշխատութեան արդիւնքը իրենց մատակարարել : Որչափ աւելի ճարտարարուեստ ըլլան , մենք ալ մեր կողմանէ այնչափ աւելի դիւրութիւն կ'ունենանք մեր պիտոյիցը կարևոր եղածն ընդունելու համար : Շահաւոր է ուրեմն մեզի համար մեր նմանեացն հանճարամիտ և աշխատասէր ըլլալը , և նաև շատ պէտք՝ և զանոնք ալ յագեցնելու շատ միջոց ունենալնին :

Ասկից կը հետևի որ՝ իբրև անհատք՝ կ'ախորժինք ու կը փափաքինք կարելի եղածին չափ չորս կողմերնիս հարուստ անձինք ունենալ , և իբրև ազգ՝ կ'ախորժինք ու կը փափաքինք որ մեզի դրացի մեծաճոխ ազգեր ըլլան : Օրինակի համար՝ ամեն տարի անհամեմատ աւելի բան կը ծախենք Անգղիոյ և Միացեալ Նահանգաց , որոնք հարուստ ազգեր են , քան թէ Յաճկաստանի , Սպանիոյ կամ Ռուսաստանի , որոնք համեմատութեամբ աղքատ ազգեր են :

Մեծ սխալմունք է ուրեմն գէշ աչքով նայիլը մերձաւորաց՝ անհատից կամ ժողովրդոց հարստութեանը վրայ . վասն զի որոնց համար աւելի ևս կրնանք աշխատիլ , կամ որոնց աւելի կրնանք ծախել . մինէ աղքատից՝ որոնք քիչ պէտք ունին և շատ քիչ մեզոց իրենց պէտք եղածը լեցընելու , և թէ մեծատանց՝ որ շատ պէտք ունին և կրնան ալ զանոնք հաճեցնել :

— Մեծատանց համար , ըսաւ խօսքին Ինորիոս . հիմա կը տեսնեմ թէ ինչպէս խաբուեր էի կարծելով թէ հարուստներուն ընչեղութիւնը աղքատաց ձեռնտակար է : Ոչինչ նուազ ճշմարիտ է թէ աղքատաց համար շատ նեղութիւն է . իրենց օրապահիկը ճարել :

— Այնպէս է , Ինորիոս , բայց ընկերութիւնն իրենց կարօտութիւնը դիւրաւ ևս կը լեցընէ . եթէ կրնար մարդ առանց աշխատութեան ապրիլ՝ բնակիլ և զգեստաւորիլ , չէր ուզեր՝ ինչպէս այսօրուան օրս , կամովին նեղութիւն յանձն առնուլ պէտքը հոգալու համար . ուրեմն բնութեան դիմադրող արգելքներէն ընկճուած է :

— Այն արգելքները դէմ հանողն ընկերութիւնն է , վրայ բերաւ Լէոնարտոս : Բնութիւնն առատօրէն կը պարգևէ մարդուս կարևոր եղածը , մինչդեռ ընկերութիւնը ամենայն ինչ ոմանց տալով՝ զայլս անհնարաւորութեան մէջ կը ձգէ իրենց կենաց ապրուստին համար պէտք եղածը հոգալու :

— Կը ցաւիմ վրադ , Լէոնարտոս . սաստիկ վրիպանաց մէջ ես , և ինծի դիւրին է ապացուցանել աս բանս՝ եթէ կը ներես որ հակաճառութեան կարգն առայ տանիմ :

— Այնպէս սիրով :

— Արդ քալ է . որովհետև ընկերութիւնն իբրև պատճառ նեղութեան կը համարիս՝ որով որ կ'ապրին շատ մարդիկ , տեսնենք թէ մարդիկ առանձին արդեօք աւելի պիտի չնեղուէին՝ քան որչափ որ կը նեղուին ընկերական վիճակի մէջ , և թէ այս ընկերութեան՝ ո՞րուն համար կը դանգատիս՝ յետին տրտնանկը անհամեմատ աւելի բարեկեցիկ չէ՞ քան եթէ ընկերութեան ծոցէն դուրս ապրելու ըլլար :

— Բայց , Պ . Տիւբրէ , ոչ թէ առհասարակ ընկերութիւնը կը մեղադրեմ . միտքս չհասկըցար : Իբրև պատճառ մեր թշուառութեանը մարդկանց արդի ընկերութիւնն է որ կ'ամբաստանեմ :

— Դիտեմ , դիտեմ , Լէոնարտոս , և միտքդ շատ աղէկ հասկըցայ . բայց եթէ քու ամբաստանած ընկերութիւնդ արհեստական դործ մը չէ , եթէ ինքն-

© National Library of Armenia

իշխան օրինաց վրայ հաստատուած ըլլալու տեղ՝ որոնք ըստ կամս կրնան փոխուիլ, մարդուս բնական և բարոյական էութեանը մէջ ունի իր հիմունքը, ամբաստանութիւններդ իրապէս ընկերութիւնը չինքեան կը վիրաւորեն։ Ցեանենք ուրեմն թէ այս ընկերութիւնը մարդուս բնական վիճակն է. և նախ բաւական է ձեզի յիշեցընել թէ մարդ գերագոյն ընկերական էակ մ'է, վասն զի ունի կարողութիւններ՝ զորոնք 'ի գործ ածելու առիթ չկայ, և պիտոյք՝ որոնք չեն կրնար յագեցուիլ՝ բայց եթէ իր նմանեաց ընկերութեանը մէջ։ —

Ա.յս խօսքիս վրայ վիէոլէն ընդհատեց զՏիւբրէ և կ'ուզէր առարկութիւն մ'ընել։ վիէոլէն՝ ինչպէս նաև Մոքոր ու Բասըմար և այլք ոմանք, անցեալ գարուն հին գաղափարացը վրայ կեցող յետամնաց միտքերէն մէկն էր. ուրիշներուն նկատմամբ ունեցած առաւելութիւնը կ'ուզէր ցուցընել առարկութիւններ ընելով որոնք ուսմանց յառաջադիմութեամբը դատապարտեալք են։ Քանի մը մտամբ կը մօտենար՝ ուրիշ շատ նկատմամբ հեռանալով, Անդրէասի, Լէոնարտոսի, Վինկենտիոս Տոռնիէի, Միքայէլ Դերրիէնի և քանի մը ուրիշ երիտասարդաց, որոնք անցեալ գարուն լուրջ ջատագովութիւններն երբեք կարդացած չէին, և հետամուտ էին այս գարուս մէջ կենդանացած քանի մը ընկերական վարդապետութեանց։ վիէոլէն այսպէս խօսիլ սկսաւ։

— Բայց սակայն ընկերութիւնը միշտ եղած չէ. մարդկային գիւտ ըլլալն յայտնի է. վասն զի եթէ առաջնային կարգադրութիւն մ'ըլլար՝ ամենուրեք միօրինակ կ'ըլլար, մինչդեռ ամեն կերպ հաստատուած ընկերութիւններ կը տեսնենք։

— Ներէ ինծի, պ. վիէոլէն, դիտել տալ որ ըսածիդ մէջ, ինչպէս նաև Լէոնարտոսի ըսածին մէջ, բառից հաւասար սխալ կայ։ Նախ և առաջ՝ ձևոց և կերպից զանազանութիւնը զոր կ'ըսես՝ բան մը չեն աժեր. երկրորդական մասեր են՝ որոնք ընկերութեան էական իսկութեանը դեան չեն հասցըներ։

Ի՞նչ է ընկերութիւն մը. աւելի կամ նուազ տարածեալ երկրի մը վրայ մեկտեղ հաւաքեալ և ապրող անհատից միութիւն մը, որոնք հասարակութիւն չահուց ունին մէկդիրնին և փոխ ընդ փոխ իրարու ծառայութիւններ կը մատուցանեն։ Աղդ ամենուրեք ուր որ մարդս գացած է, ուր որ կարդաւորեալ ընկերութիւններու հանդիպած է՝ զանոնք մի և նոյն հիմանց վրայ հաստատեալ գտեր է, որ է փոխոխակի իրարու օգնելու և ծառայելու պիտոյից վրայ։ Ամենուրեք ոմանք երկիր կը բանին, մինչդեռ այլք ամենազգի ճարտարութեանց և արուեստից վրայ կ'աշխատին. ոմանք կը ծախեն, ոմանք կը գնեն. կան և այլք՝ որոնց արուեստն է տեղոյ մը բերքն երթալ բերել այլոց մատակարարելու համար։ Ամենուրեք օրէնք կան մարդուս աշխատութեան պտուղն ապահովելու համար։

— Այո՛. բայց այս օրէնքը կը տարբերին ըստ տեղեաց։

— Ինչպէս որ մարդիկ ալ իրարմէ կը տարբերին, պ. վիէոլէն. կան մեծեր՝ պզտիկներ, զօրաւորներ՝ տկարներ, բարիներ՝ չարեր, անխելքներ՝ խելացիներ, գործունեաներ ու ծոյլեր. և սակայն՝ի խորս դիտելով մարդը միշտ նոյն է, մի և նոյն կերպով կազմուած, նոյն կարողութիւններն ունեցող՝ միայն այլևայլ աստիճանաք։ Նոյնպէս ամենայն ընկերութեանց մէջ մի և նոյն հիմնական տարերքը կը գտնես՝ այնպիսի տարբերութիւններով որոնք ընկերութեան ընդհանուր բնաւորութեանը փոփոխութիւն չեն բերեր, որչափ որ մարդկանց իրարու մէջ ունեցած տարբերութիւնները չեն այլափոխեր մարդկութեան ընդհանուր բարքը։ Բայց մեր խնդրոյն դառնանք։

Եթէ մարդս աշխարհիս ամեն կողմը կը միանայ ու ընկերութիւն կը կազմէ, ըսել է թէ բնութեանը դրդմամբ յայն կը մղուի. սրտին մէջ սիրելու, իր նմանները գտնելու, ծառայելու և ծառայու-

© National Library of Armenia

թիւն խնդրելու տրամադրութիւն մը կայ. մէկ խօսքով՝ սիրալիր և բարեյօժար հակամիտութիւններ՝ որոնք միայն ընկերութեամբ կը յագենան։ Ուրիշ կողմանէ, անհատից վրայ կը դիտենք մտաւորական կարողութեանց և բնական զօրութեանց տարբերութիւններ՝ իսկապէս օգտակար ընկերութեանց կացութեանը համար, որոնք իրենց կիրառութիւնը միայն յայնմ կը գտնեն։

Այսպէս ոմանք մանաւոր ընդերական այժ մ'ունին և կրնան ամենայն բիրտ աշխատութիւններն ալ կատարել. այլք՝ դժնդակ աշխատութեանց անկարողք՝ կը յայտնին ան բաներու մէջ որ փափկութիւն և ճաշակ կը պահանջեն. ոմանք ալ՝ մտաւորական տաղանդ ունենալով՝ չեն կրնար մարմնական աշխատութեանց տալ զիրենք, այլ ուսմանց և արուեստից հետամուտ կ'ըլլան. գիւտեր կը գտնեն՝ որոնցմէ կախեալ է քաղաքականութեան յառաջադիմութիւնը. գաղափարեալ խորհուրդներ կը յղանան՝ զորս այլք կը գործադրեն։ Ամենայն ինչ յընկերութեան իւր կիրառութիւնն ունի, և անկէ դուրս միայն նիւթական զօրութիւն կրնայ բանեցուիլ. վասն զի ամենայն անհատ պէտք է որ անձամբ գործէ ամենայն ինչ, և անհրաժեշտ պիտոյքը լեցընելու չափին մէջ գոհ ըլլայ։

Ընկերութեան հիմն է նաև գերդաստանը որուն փոքրիկ նկարատիպն է, յորում ամենայն ոք ընդհանուր բարեաց հետամուտ է իր մանական զբաղանացը պարապելով։ Գերդաստանն է ոչ միայն արենակից՝ այլ և համակրիք ու իրարու պէտք ունեցող անհատից միութիւնը։ Մարդկային ընութեան մէկ պէտքն է որ այր և կին յարատև կապով կը միանան. հաւասարապէս իրենց որդւոցն համար ալ պէտք մ'է հետերնին ապրիլը՝ որպէս զի պաշտպանութիւններին վայելեն։ Գերդաստանը նաև ընկերութիւն մը կը ձևացընէ՝ ուր ամենայն ազնուագոյն զգացմունք իրենց յարդուրդը կը գտնեն և որ կ'օգնէ քան զայլ ամենայն ընկերական հաստատութիւն՝ յերջանկութիւն մարդկային ազգի։

Ամուսնութիւնն որ զոյ է ընտանեաց, այսու ընկերութեան առաջին կապը կ'ըլլայ. ամուսնութեամբ մարդս անբաւնէն կը տարբերի. և արդարև իսկ, կենդանեաց մէջ որոնց ձագերն որ իրենց ծնողացը պէտք չունին՝ անտեղ միութիւն մ'է եղածը. և անոնց ալ մէջ, որ խեղճ վիճակի մէջ ծնանելով պէտք կ'ունենան իրենց հօրն ու մօրը խնամոցը, աւելի տևողական միութիւն մը կայ, այլ տակաւին առժամանակեայ է և իրենց ձագուցը պիտոյիցն հետ կը դադրի։ Իսկ մարդկանց մէջ միութիւնը յարատև է, և որպէս զի այնպէս ըլլայ՝ Աստուած ուզեց որ մարդուս տըղայութիւնը փափուկ և երկայնժամանակեայ ըլլայ. այսու նաև ամուսնութեան միջնջենաւորութիւնն ալ բնականապէս իրեն պատճառն ունի։

— Սակայն լսած եմ ոմանցմէ, բսաւ Ռնորիոս, որ կ'ուզեն ամուսնութիւնն առժամանակեայ տեսակ մը դաշինք ընել. այլ այս մտածութիւնը կը զայրացնէ զիս։ Կ'ուզեն որ անբաւնից նմանինք, որոնք կը միաւորին բաժնուելու և մէյմ'ալ զիրար չճանչնալու համար։ Օ'ն անդր. այս մտածութիւնը զիս կ'ամբոշխնէ։

— Շէն կենաս, Ռնորիոս. այս զայրացմունքդ զգացմանցդ պատիւ կ'ընէ. սակայն հանդարտէ. քանի մը անպզտամարդիկներ այսպիսի հրէշային գաղափար մը կրցան ունենալ, որ սակայն և ոչ վայրենեաց մէջ եղած է. բայց առհասարակ ամենուն զզուանքն իսկոյն քամահելի ըրաւ զայն։

— Շատ լաւ, Պ. Տիւբրէ. անշուշտ այն անձինքն երբեք ընտանիք ունեցած չէին։

— Իրաւունք ունիս, Ռնորիոս. վասն զի ոչ պէտքն է միայն կապ ընտանեաց, այլ մեր սրտին մէջ եղող զօրաւոր ուազգու զգացմունքն է, այն՝ որուն համար է գրեթէ աշխարհիս վրայ գործեալ ամենայն ինչ՝ որ է ըսել որդւոց սէրը։ Այս զգացումն ամենայն հակառակ սր-

© National Library of Armenia

գելից խղիչ է և դեմ դնող. զմարդ կա-
րող կ'ընէ ծանր ծանր աշխատութեանց
համբերելու, դժուարին զրկումներ կրե-
լու և խիստ աշխատութիւններ յանձն
առնելու. առանց այսմ՝ աշխարհիս վը-
րայ եղածը կիսովին իսկ չէր ըլլար.
մարդս իրեն համար երբեք չըրածն՝ որ-
դւոյն համար կ'ընէ: Այո՛, պարոնայք.
բաւածիս զարմանալի օրինակ մ'ունինք
հոս. գիտէք որ մեր աւանին բարի օ-
րինակը Ընորիոս՝ ընտանեաց ճշմարիտ
դիւցազն է:

— Ո՛հ, պ. Տիւբրէ, գոչեց Ընորիոս,
չափազանց է տուած պատիւդ. արժա-
նի չեմ այնչափ գովեստից. ըրածս
պարտքս է միայն, բայց հաւատա որ
կողակից և որդւոցս մէջ վայելած եր-
ջանկութեամբս հատուցմունքս լիովին
գտած եմ:

— կը հաւատամ, Ընորիոս, վասն
զի եթէ գումարն ու գործը ամենայն
զգացմանց սաստկագոյնն է՝ նոյնպէս
նաև քաղցրագոյն վայելից է պատճառ:
Մարդս իր ընտանեաց պէտքն հոգալու
համար, տղաքը կրթելու և մնուցանե-
լու համար, անոնց ապրուստն ապա-
հովցնելու համար՝ անտրտունջ ամեն
տեսակ նեղութիւն յանձն կ'առնու:
Մինչդեռ ուրիշ մարդկանցմէ իր շահը կը
փնտրէ՝ ընտանեաց մէջ իրենները
երջանկութիւնը կ'ուզէ. բարեխնամու-
թիւնն ու գուրգուրանքն՝ իբր ապագայ
երջանկութեան ճառագայթ մը կը փայ-
լին տնական վառարանին մէջ:

ՌԱԲԷ

Կը շարունակուի:

Ճշմարիտ միխթարութիւն.

Ոչ երբեք ինչ և իցէ դեղ ու դարման բժշկած
է սրտի հիւանդութիւնները, տխուր ու վշտաբե-
կեալ թախծութիւնները, ինչպէս՝ գիտնալ
պարտքերնուս անթերի կատարումը:

Շատ անգամ անկարող կը գտնեմք զմեզ մոռա-
նալու ու զգալու. զբարիս ուրիշին գործելու ու
առնելնք:

ԻՄ ՎԱՆՔՍ

Դրաբեանի մը աւետիս յիշատակա-
գիրք:

(Տես Հա. ԻԶ, երես 369)

ԺԱ

Բոլոր օրը թափառական քալեցի, բայց միշտ գեղին մօտերը: կարծես թէ դղեկին տեսութիւնը չէի կրնար աչքէս կորսընցնել, որ նոյն օրը ինծի համար այնչափ տխրական տեսարանի մը վկայ եղեր էր: Ջանազան անգամ ծառի մը բնոյն կռթընած, կամ փոսի մը եզերքը նստած, յափշտակեալ կերպով մը կե-ցայ դիտեցի շերտերն ու աշտարակը որ չրջապատող սոճիներէն ու կաղնիներէն վեր կը բարձրանային: Տպգած երևա-կայութիւնս այն իմ հին բնակարա-նիս սրահներուն և սենեակներուն մէջ կը պտըտէր, և մերթ կը տեսնէի պզտիկ կարոլինան, որ մօրս բազկացը մէջ ին-ծի հետ մանկաբար կը խաղար. և մերթ կը տեսնէի նորապսակ հարսը որ ծա-ռայից և հպատակաց մեծարանքը կ'ըն-դունէր: վերջը Պաւտիի չարագուշակ կերպարանքը սպառնալից և զգուելի կերպով մը այս ուրախ և զուարթ պատ-կերին հետ կը խառնուէր. տեսարանն յանկարծ իր երևոյթը կը փոխէր, և մէկէն այն մխիթարիչ յափշտակման՝ սարսափման և զարհուրանաց ազդում մը կը յաջորդէր:

Այն տեղն տեղութեան և միան-դամայն սրտի յուզման ներմակերմ ար-ցունքներ արտահանուքէս կ'իջնէին, բո-վանդակ իմ կենացս բեռը կը զգայի. և չատ անգամ անմիջական անձնասպա-նութեամբ մը զիս այս վշտալից տեսա-րանէն բոլորովին վերցընելու յուսա-հատ խորհուրդը մտացս մէջ փայլա-կեց: Բայց մինչդեռ այս Աստուծմէ թո-ղուած հոգի մը գոհ ընող վերջին խոր-հուրդը պատրուակական հանդարտու-թեամբ և ախորժով կը տածէի, կար-

© National Library of Armenia

Ահա թէ կը տեսնէի կարոլինան դիմաց ծնկան վրայ եկած, որ խոնարհ աղաչանաց կերպի մէջ շուշանափայլ ձեռքերն իրարու քով բերած, եռանդնալից կը պաղատէր որ կեանքս պահեմ, զինքը ազատելու համար անոր ձեռքէն, որ իր դահիճը պիտի ըլլար, ինչպէս որ արդէն իր հօրը սպանողն եղաւ։ Այս բաւական էր ինծի ոչ միայն տանելի ընելու կեանքը, այլ նաև կրկին միտքս հաստատելու որ մեծագոյն խնամքով պահեմ զայն. վասն զի ներքին ձայն մը կ'ըսէր ինծի որ ես իրեն խնամակալ և բարերար հրեշտակը պիտի ըլլամ։ Ո՛հ, ինչո՜ւ այն յանցաւոր մտածումներուն և ապնուական խորհրդոց վայրկեաններուն մէջ, միտքս և սիրտս յերկինս վերացնելու զօրութիւնն ու քաջութիւնը չունէի, որ անկից օգնութիւն և մխիթարութիւն հայցէի։ Թերևս քան զամենայն մարդ ամբարիշտ անձէն կ'ազատէի այն անմեղ արարածը, առանց անօրինագոյն ոճրագործութեամբ մը չաղախելու զիս։

Բայց և այնպէս այն մատաղ հասակէս մօրս ինծի ջամբած հաւատոյ վերջին նշխարը զօրացուց զիս, և խռովեալ սիրտս քիչ մը հանդարտութիւն մուտ։ Ոտք ելայ հաստատ միտքս դրած որ ի՛ սիրոյն աղջկանը վրայ հսկեմ անդադար, և այնչափ տարուան ժամ բրութենէ և անհաւատութենէ եռանդագին վերացնելով, երբ դուրսնայ հօրս յարգելի յիշատակին վրայ, որ իմ ամենայն կարողութեամբս այս խեղճ աղջկան օգնեմ, խնդրելով մօրմէս, զոր արդէն արքայութեան մէջ կը կարծէի, մանաւանդ օգնութիւն մը՝ մեր բարի սիրոյը միակ յաղորդին կեանքը պահպանելու և անոր ժառանգութիւնը պաշտպանելու։

Այս մտածութիւններով հովանաւոր ճամբէ մը առաջ գացի, որ ինծի բոլորովին անծանօթ չէր։ Երկայն միջոց քալեցի, առանց գիտնալու թէ վերջապէս ուր կրնամ երթալ։ Բնաւ կենդանի արարած մը չկար հոն, և սաստիկ խոր լռութիւն մը ամէն կողմ կը տիրէր։ Բայց այս լռութիւնն յանկարծ ընդհատեցաւ հեռաւոր ձայներու չփոթ չղջնջինէ մը, որ անորոշ կերպով մը թանձրախիտ անտառին մէջ արձագանգ կու տային։ Վերջը կարծես թէ սրարշաւ ձիոց դրնդիւն մը լսեցի։ Զայներու չղուկը միշտ աւելի կը մօտենար ինծի, և կ'իմանայի որ երթալով մօտանց կը լսուէր սալասմբակ ձիոց դոփիւնը։ Ճամբան երկայն միջոց ուղիղ գծի վրայ կ'երկրննար. եւս դարձայ և տեսայ որ զառիվեր և անհարթ ճամբուն վերջին ծայրէն ձի մը դուրս ելաւ, որ կատաղաբար խոյանալով դէպ 'ի ինծի կու գար։ Անհնարին սոսկմամբ աչքիս զարկաւ որ վրան կին մը հեծած էր, հրաշունչ կենդանւոյն գլխոյն վրայ ճերմակ քօղի մը ծփալը տեսնելով։ Հասկըցայ մէկէն որ այն ձին սանձի չէր հնազանդեր, և անտառին մէջ մղուեր էր, վրան հեծնողն ալ չկարենալով զինքը բռնել և կառավարել։ Մէկէն միտքս դրի զանիկայ կեսրնելու, որ այն եղկելին մօտալուտ վտանգէն ազատեմ. ճամբուն մէջտեղը կեցայ և սկսայ որչափ որ կրնայի պոռալ որ զինքը քիչ մը վանցնեմ։ Ըսելէս աւելի երագ, ձին ընդունքէն կրակ շնչելով և բերնէն արիւնախառն լորձունք թափելով քանի մը քայլ հեռու է ինձմէ։ Աներկիւղ առաջ կը ցատքեմ, մէկ ձեռքովս բաշէն կը բռնեմ, և միւսով բովանդակ ուժովս սանձէն կը քաշեմ։

Կենդանին՝ այն անակընկալ արգելքին՝ կատաղաբար կը շնչէր։ Սաստկութեամբ գլուխը կը ցնցէր, և անդադար դէպ 'ի վեր կը ցատքէր որ ձեռքէս ազատի։ Բաւական միջոց չարունակեց իր յուսահատ ընթացքը, զիս ալ մեկտեղ քաշելով, իբրև թէ թեթև յարդ մը ըլլայի։ Բայց ես վզին պատատեալ կեցեր էի, ուժով իր ռնդունքը ճնշելով։ Կամաց կամաց հանդարտեցաւ, զգալի կերպով մեղմացուց ընթացքը, ինչուան որ գետնէն վեր ցցուած քանի մը ծառի արմատներու մէջ բռնուելով, հեւալով և ուժաթափ գետին տարածուեցաւ։ Այնատեն երկու ծնկերս

ուսին վրայ դրի, և ամենայն խնամք ը-
րի այն խեղճ խաթունն ազատելու, որ
մարած վրան տարածուեր էր։ Համե-
տին փոկերն կըտրեցի՝ որ աւելի դիւ-
րաւ ազատեմ զինքը, և բազկաց վրայ
վերցընելով զինքը, հաստ կաղնւոյ մը
արմատին քով զետեղեցի։ Ջին ազատ
ըլլալն իմանալով, սաստկութեամբ վեր
ցատքեց և սկսաւ անտառին մէջ խու-
ճապաւ վազել։

Բայց ինչ զարմանք ունեցայ երբ այն
խաթունին քօղը վեր առնելով, գլուխը
աւելի լաւ մը զետեղելու համար փե-
տրազարդ գլխարկն հանելով, տեսայ
որ կարոլինան էր։ Զունիմ խօսք՝ զգա-
ցածս բացատրելու, երբ դրկացս մէջ
նուաղեալ տեսայ այն սիրուն օրիորդը,
որուն կրնամ ըսել թէ իմ կեանքս նուի-
րեր էի։ Մահուան պաղ քրտինք մը անոր
ճակատը կը թրջէր, որ կամիլ կամիլ
իր խարտեաշ մազերուն խառնիխուռն
օղերուն վրայ կ'իջնար։ կենաց նշան մը
չէր տար. իր դեղեցիկ երեսը դիակի մը
պէս ճերմակ էր. միայն թեթև վարդա-
գոյն կարմրութիւն մը հազիւ այտերը
վրայ կը ծաղկէր։

Ես չէի գիտեր ինչ ընելիքս։ Հեկե-
կալով գինքը կը կանչէի, և մեղմով մը
կը ցնցէի։ Ձեռքը բռնեցի. բայց քարի
պէս ցուրտ ու պաղ էր։ Արդէն մեռած
կարծեցի. և սկսայ այն առեն յորդա-
հոս արտասուք լալ. և թէպէտ մինակ
ըլլալս գիտէի, սկսայ պոռալ. Օգնու-
թիւն, օգնութիւն։ Մէկ աչք բանալ
գոցելու մէջ՝ ինծի մօտ մարդ մը կը
տեսնեմ, որ քովս կեցաւ և ուշադրու-
թեամբ դիտելով գկարոլինան, ըսաւ
ինծի.

— Ահաւասիկ պատրաստ եմ՝ օգնե-
լու քեզի։

Այն ձայնէն ցնցուեցայ. նայեցայ ա-
նոր երեսը և մէկէն ճանչցայ որ Մար-
տինոան էր։

— Հո՞ս ալ կը գտնեմ գքեզ. բայց
ինչպէս դու հոս ես։

— Մէկդի թողունք չատխօսութիւնը,
պատասխանեց անիկայ բիրտ կերպով
մը, և գործելու նայինք։ Պէտք է այս
կինն արթնցընել, եթէ դեռ կենդանի
է. կամ մէկ տեղ մը փոխադրել, եթէ
մեռած է։ Բախտը, բարեկամ, մաս-
նաւոր կերպով մը կ'օգնէ քեզի։ Այն
կինն զոր դու կը սիրես...

— Ի՞նչ գիտես դու, մէկէն խօսքը
կտրեցի, երեսս կրակի պէս կարմրնա-
լով։ Բայց ո՛վ ըսաւ քեզի որ ես գինքը
կը սիրեմ։

— Աւելորդաբանութիւնը մէկդի թո-
ղունք։ Ջեռք տուր ինծի այս աղջիկը
դետնէն վերցընելու, և եռանք հոսկէ.
վասն զի քիչ առենէն կ'ապահովեայ
վտանգէն։

Ես նիւթաբար հնազանդեցայ, ա-
ռանց ինչ ընելս գիտնալու։ Բայց վեր-
ջը Մարտինոս, յանկարծական մտա-
ծութենէ բռնուածի մը պէս կեցաւ և
գրպանէն դաշոյն մը հանելով ինծի
տուաւ, ըսելով.

— Ով որ գինքը աղէկ կը նայի, ա-
պահով կ'ազատի։ Դժուարին բան մը չէ
որ գինքը փոխադրենուս միջոց մէկու
մը հանդիպինք, որ ուզենայ այս կինս
ձեռքերնէս խլել։ Քաջութիւն ուրեմն և
հաստատութիւն. միտդ դիր որ և ոչ
սատանային ձեռքը տաս գինքը, թէ և
անձամբ հոս գալու ըլլայ գինքը պա-
հանջելու։ Ես միշտ պատրաստ եմ իմ
պարտքս կատարելու։

Առանց և ոչ դոյզն ուշադրութեան
մը՝ դաշոյնը գրպանս դրի. և կարոլի-
նան վերջացինք դետնէն։ Բայց այն մի-
ջոցին որ անտառին մէջ պիտի մտնայ-
ինք, ձիաւոր մարդ մը որ արշաւակի
դէպ 'ի մեր վրան կը վազէր, սկսաւ
պոռալ. կեցէք, կեցէք, ապստամբք և
դաւաճանք։

— Հենրիկ, կանչեց Մարտինոս՝ ինք-
իրմէն դուրս ելածի պէս, Հենրիկ.
անօրէն Պաւտին է որ կ'ուզէ իր ըս-
պանդն ձեռք բերել. քեզի կ'ինայ քու
սիրոյդ աղջիկն ազատել։

Մէկ ակնթարթի մէջ Պաւտի վրա-
նիս հասաւ. ձին կեցուց, ձեռքըատրճա-
նակ մը առաւ, և մեզի ձայն տուաւ որ
կենանք։

— Ցուէք ինձի այն կինը, ապստամբ

© National Library of Armenia

աւազակները, սկսաւ պոռալ, անանկ աչքերով որ կարծես թէ իրենց տեղէն դուրս կ'ուզէին ելլել։

Մարտինոս դարձաւ խրոխտաբար և իրեն նայեցաւ, և անհնարին պաղ ա-րեամբ մը ըսաւ.

— Ոչ, պիտի չառնուս զայն. այս կինը քուկդ չէ։

Այս խօսքերուս ամբարիշտ Պաւտին աւրճանակը կը լարէ, և դէպ 'ի մեզի շակելով, բարկութենէն գրեթէ խըղ-դուած ձայնով մը կը պոռայ.

— Կամ այն կինն ինծի թող, կամ քու ուղեղդ կ'այրեմ։

— Ըրէ ինչ որ կ'ուզես, բայց այս կինը իմ ձեռքէս պիտի չելլէ։

— Ա՜հ՛... դաւաճան, վրայ բերաւ Պաւտի՝ կերկերալով մը. և աս ըսելն ու աւրճանակը պարպել, մէկ եղաւ։

Գնտակը եղկելի կարոլինայի ճակա-տը վիրաւորեց. և ձեռքիս վրայ արեան քանի մը կաթիլ ինկաւ։

Ան որ տեսայ, աչքերս մթնցան և գազան դարձայ։ Մարտինոսի պահպա-նութեանը թողուցի կարոլինան, և կա-տաղութեամբ այն անօրինին վրայ յար-ձրկեցայ։ Ուժով մը մէկ սրունքէն բըռ-նեցի, և ձիէն վար իջեցնելով, գինքը գետին փռեցի. վերջը Մարտինոսի տուած դաշոյնը քաշելով, վերուցի ձեռքս որ սիրտը խոթեմ, կատաղու-թեամբ և յուսահատութեամբ պոռա-լով. Մեռիր անօրէն։

Պաւտի մէկ ձեռքովը նահանջեց հա-րուածը. և անպիտանը մնհուան դու-ռը տեսնելով գինքը, սկսաւ աղաչել որ կեանքը թողում իրեն։

— Ոչ, ըսի մէկէն, ոչ, դու արժանի չես ապրելու։ Դու իմ հօրս և տիրոջս սպանողն եղար. հիմա երկուքին ալ վրէժը կը հանեմ, զբեղ այս աշխարհիս վրայէն վերցնելով, ուր բնաւ պէտք չէիր դալ։

Ինքը առատ արցունք թափելով, մե-ծադոյն թախանձանքով իր աղաչանքը կրկնապատկեց։

Ան տեսարանը սիրտս չդարժեցուց և բարկութիւնս չիջեցնելէ դուրս, աւելի գինքը սպաննելու արծարծմունքն ու փափաքը սաստկացուց։

— Ա՛յ վատ, կանչեցի սաստկու-թեամբ, քեզի պէս վատ. պաղ արեամբ այնչափ չարիք գործեցիր, առանց քըստ-մունք մը զգալու այնչափ անմեղներ սպաննեցիր, և հիմա մահը ճակտիդ վրայ տեսնելով, տղու մը պէս կ'աղաչես կու լաս։ Ա՛յ վատասիրտ։

— Գթացէր վրաս, կը շարունակէր անիկա, երեսը դիակի մը պէս կապոյտ գոյն առած. ինչ կ'ուզես ըրէ ինծի, բայց կեանքս թող։

— Կեանք կ'ուզես։

— Ա՛յո՛, կը խնդրեմ զայն քեզմէ յա-նուն Աստուծոյ, յանուն քու հօրդ և մօրդ։ Իրաւունք ունիս, անօրէն ու ամ-բարիշտ մըն եմ. բայց թէ որ իմ վրաս չես զգար կարեկցութիւն, որուն ար-ժանի չեմ, գէթ իմ դեռահասակ հար-սիս ողորմէ, որ այս աշխարհիս մէջ միայնակ և անտէրունչ պիտի մնայ, եթէ ես պակսելու ըլլամ։

— Լռէ, անպիտան. այդ հրեշտակին անունը մի՛ տար. անունն անգամ բե-րանդ առնելու արժանի չես։ Բայց կեանքդ թողլու համար այս ալ բաւա-կան չէ։

Ան ատեն ինչուան նաև զԱստուած ուրանալ տալով, իրեն կեանքը թողլու խոստմամբ, երբոր, ոմն սոկումն, ու-րացաւ,

— Ա՛հ նենգաւոր, մեռիր. այսպէս ցյաւիտեանս կ'երթաս կը կորուիս,

Ըսելով սիրտը խոթեցի դաշոյնը. և ոչ հեծութիւն մը արձակեց, և ցուրտ դիակ մը մնաց։

Ողբ ելայ՝ ինքիրմէս դուրս ելած. աչքս չորս կողմն դարձուցի որ տեսնեմ թէ ուր են Մարտինոս և կարոլինա. բայց այն տեղը բոլորովին անապատ էր, և կարոլինա ու Մարտինոս անհե-տևուած էին։

Առջի վայրկենին մոռցեցի որ Մար-տինոս թփուտի մը ետև քաշուած ըլ-լայ, սպասելով որ օգնեմ իրեն՝ այն եղկելի աղջիկն փոխադրելու։ Սկսայ չորս կողմն նայիլ. վեր վար գացի, ին-

© National Library of Armenia

ծի մօտ անտառը ուշադրութեամբ մը զննելով։ Բարձր ձայնով ու կրկին և կրկին Մարտինոսը կը կանչէի. բայց ոչ ոք կը տեսնէի, և ոչ ոք իմ կանչելուս կը պատասխաներ։

— Ո՛ւր գացած կրնայ ըլլալ ասիկա, կը հարցընէի մտքէս, չկարենալով այս անակնկալ անհետանալուն պատճառն իմանալ։

Զախորդ մտածութիւն մը յանկարծ բռնեց զիս. և վախցայ մեկէն որ ջինքը յափշտակած չըլլայ։

— Բայց ինչ վախճանաւ. և ուր կրնայ զինքը պահած ըլլալ. և ինքը ուր կրնայ ըլլալ։ Բոլոր այս հարցմունքներս մտքիս մէջ կը յուզէին, մեծ անհանգըստութիւն պատճառելով ինծի։ Ես փորձով գիտէի թէ ինչպիսի ամբարիշտ մարդ մըն էր Մարտինոս, և ինչպէս Պաւտիի այն եղկելի արարածին վրայ որոշած անօրէն խորհուրդներն, և զանոնք՝ ի գործ դնելու համար ուզած եղանակը՝ տեղն ի տեղը գիտէր։ Ուստի կասկածեցի որ ինքը Պաւտիի սպանութենէն օգուտ քաղել ուզած ըլլայ, իր բովանդակ չահուն համար ուրիշ անօրինագոյն գործի մը ձեռք զարնելու մտքով։ Բայց մէկալ կողմանէ ինծի կ'երևար որ չէր կրնար այս բանին յարմար միջոցներն ունենալ, թէ և յանկարծ այնպիսի չար դիտմունք մը ունենար։ Այս մտածութիւնը թէ և բոլորովին չէր հանդարտեցներ զիս, սակայն յուսոյ թել մը անվթար կը թողուր, որուն՝ առ՝ի չգոյէ ուրիշ բանի, բաւական վստահութեամբ կը յառնէի։

Բայց այս մտածութիւններն, այս տարակոյսներն և վախերն յանկարծ անհետացան, երբ ետ դառնալով որ երթամ, և աչքս գետինը խոնարհեցնելով, տեսայ Պաւտին չնչասպառ և արեան վտակի մը մէջ ընկղմած։ Այն երևոյթը ահաւոր սոսկում մը պատճառեց ինծի. և ոչ վայրկեան մը կրցայ զինքը դիտել, և լի զարհուրանք երեսս ուրիշ տեղ դարձուցի։ Նայեցայ ձեռքերուս, և մարգու մը արեամբ շաղախած տեսայ. նայեցայ զգեստներուս ալ, և նոյն արեամբ թաթխուած տեսայ. այն վայրկենին բովանդակ իմ չարութեանս ծանրութիւնն ըմբռնեցի. և ներքին ձայն մը, որուն սարսափէն գլխուս մազերը կը տնկուէին, խուլ կերպով մը կը պոռար. Մարդասպան ես, մարդասպան ես։ Կարծես թէ բոլոր չորս կողմս եղած բաներն այս դժնդակ ամբաստանութիւնն կը կրկնէին. և անանկ մը կու գար որ արձագանգը վաղեմի անտառին կաղնեաց ու սոսեացը մէջ բիւր անգամ կը յեղյեղէր զայն։ Եւևէս ինկող ստուերէ մը հալածուած ինծի պէս, որ իմ խռովեալ երևակայութեանս մէջ մարմին կը զգեստուր և ըսպառնալից կերպարանք մը կ'առնուր, սկսայ առաջ քալել, առանց գիտնալու ուր կ'երթամ։ Ազին անդին թափառեցայ, խելքս կորնցուցածի պէս մի և նոյն ճամբան ընելով ու ընելով և իմ հետքերս կոխելով։

Գիշերը վրայ հասաւ մինչ ես անտառին թանձր խորերն էի։ Ո՛հ, մարդասպանի մը համար ուրչափ սոսկալի է գիշերը։ Զարհուրելի երևոյթներ չորս կողմս կը խըռնէին, և Պաւտիի խռովեալ և արիւնաշաղախ ստուերը չարունակ աչքիս դիմացն էր։ Միշտ ականջս կը հնչէին իրեն աղաչանքներն որ իրեն կեանքը խնայեմ, իբրև ազդոյ յանդիմանութիւն մը՝ որով իմ յանցանքս երեսս կը զարնէր։ Ես զինքը վատ կը կանչէի, որովհետև կը խնդրէր որ զինքը մահուընէ ազատեմ. բայց այն ատեն կը տեսնէի որ ես կրկին վատ եղայ, տապալուած և յաղթուած մարդ մը սպաննելով, որ ալ ինծի չարիք մը չէր կրնար ընել։ Բայց այս ամենը ոչինչ էր այն մտածութեան քով, որ ամեն խղճմտանքէ աւելի կը նեղէր և կը կեղեքէր զիս, որ գոհ չեղայ իր կեանքը վերցնելու, այլ և յաւիտեան իր հոգին դատապարտեցի։ Այն իր զննուած ուրանալու ժամանակ արտաբերած գժտալուր բառերն՝ սրտիս վրայ մղձաւանջի մը պէս կը ծանրանային, և դառնագոյն խղճի խայթերով հոգիս կը քաղէին։

© National Library of Armenia

— Աստուած իմ, Աստուած իմ, կանչեցի լալով և ձեռքերս երկինք վերցնելով. Գթացէր վրաս. մոռցէր զիս. և թող որ զարհուրելի տանջանքներով յանցանքս քաւեմ. բայց անոր հոգին ազատէ։

Ինկան վրայ ինկայ և գրեթէ առանց անդրադառնալուս, աղօթք մը մրմնջեցի՝ ի հանգիստ անոր հոգւոյն։ Բայց անպատուղ և ընդունայն էր այն աղօթքը. կը տեսնէի իմ սպանդս դժոխքին խորը թաւալած, և կարծես թէ իր կողկողագին աղաղակներն ու ցաւագին ողբերը կը լսէի։ Այնատեն ալ չէի համարձակեր ոչ ինծի և ոչ իրեն համար աղօթել. զգայի որ անարժան եմ Աստուծոյ դիմաց երևնալու, և վհատեցուցիչ յուսահատութեան մը մէջ ինկայ։ Մոռթափի մը պէս ոտք ելայ, և սոսկալի հայհոյութիւններ բերնէս հանեցի։ — Աստուած թողուցեր է զիս, կ'ըսէի մտքէս. Աստուած դատապարտեր է զիս. ուրիշ բանի արժանի չէի, և յաւիտեան կորսուած եմ։ Ահա իմ տեղս, ահա իմ բնակութիւնս. հոս արշերու և գայլերու մէջ պիտի լմնցընեմ իմ կեանքս. մանաւանդ թէ առիւծուց և վագերց մէջ պէտք էի ապաստանիլ. վասն զի այս գազաններն ինծմէ աւելի մարդասէր են։ Անոնք մարդու վրայ կը յարձակին, արիւնը կը ծծեն, և մարմինը կը սպաննեն. բայց հոգւոյն չեն դպչիր, և չեն յանդգնիր զինքը ստեղծող Աստուծմէն յափշտակել զայն։ Ես անոնցմէ աւելի գէշ ըրի, մանաւանդ թէ վայրագագոյն կենդանւոյն ընել չկրցածն ըրի. հոգւով և մարմնով ինծի նման մը սպաննեցի։ Ինչպիսի սոսկումն։

Երկայն օրեր այս խղճի տագնապներու և յուսահատութեան մէջ անցուցի. ոչ կ'ուտէի և ոչ քուն կ'ըլլայի, մանաւանդ թէ կրնամ ըսել որ ալ այս աշխարհքէս չէի. ցամքեալ և չոր կօճղ մը դարձեր էի, որ դեռ ոտքի վրայ կը կենայ, բայց առանց կենդանութեան և աճման։ Քանի մը անգամ ուզեցի գլուխս ծառի մը կամ քարի մը զարնելով ջախջախել, որ իմ սճրագործութեանս խղճի խայթերէն ուրիշ սճրագործութեամբ մը ազատիմ։ Բայց կարծես թէ սիրտս և զօրութիւն միանգամայն կը պակսէր ինծի՝ վերցընելու այն կեանքը, որ բարկութեանս ծայրը հազած միլլոյը մէկ ուրիշ մարդէ մը կորեր էի։ Պէտք է ուրեմն, կ'ըսէի մտքէս, որ իմ թշուառութեանցս բաժակը մինչև ցմրուրը խմեմ, և անստուգութեան ու յուսահատութեան մէջ քիչ քիչ նուաղի այն կեանքը՝ որ մէկ հարուածով մը եղկելի Պատիէն պակսեցուցի։

Բայց ասիկա ապականեալ խղճիս խոր վիրացը վրայ ծաւալեալ բալասան մը պէս եղաւ։ Ոճրագործութեան մտածութեան կամաց կամաց քաւութեանը յաջորդեց։ Ուստի Աստուծոյ վախէն եաև, մանր դիշերուան մէջ լուսոյ ճառագայթի մը պէս իր ողորմութիւնն առջևս ներկայացաւ։ Ո՛հ. որչափ Աբրալչին այս քաղցր կարողութիւնն զօրացուց զիս և քաջալերեց այն ցաւոց և յուսահատութեան ահաւոր վայրկեաններուն և սոսկալի ժամերուն մէջ։ Մեղայ, կ'ըսէի, այո մեծապէս մեղայ. բայց կարելի՞ բան է որ Աստուծոյ բարութիւնն ինծի համար լմնցած ըլլայ։ Աղդողագին կերպով մը իմ յանցանքս պիտի քաւեմ. և փրկչին ողորմած սիրտը պիտի բռնադատեմ։ Հայրս և մայրս ինծի համար կ'աղօթեն. անոնց աղաչանացը հետ թերևս և ազնիւ կարոլինայի աղօթքը կը միանայ. ով գիտէ, թերևս Աստուած կը լսէ, որուն արժանի չեմ իմ յանցանքիս մեծութեանն համար։ Ծնկերս գետին խոնարհեցուցի և ամենայն եռանդեամբ իմ ծնողացս պատեցայ որ իմ հոգւոյս և խեղճ Պատիի հոգւոյն համար բարեխօս ըլլան։

Գիշերը շատ առաջ գացեր էր, մէկ մ'ալ զանգակի մը յամրաշարժ զանգիւնը ականջս հնչեց։ Այն ձայնին մէջ կարծես թէ Աստուծոյ ձայնը կը լսէի, այն Աստուծոյն՝ որ այնչափ անգամ իմ անմեղութեանս ժամանակ՝ սրբանուէրը պղնձոյն անոյշ զանգերովն իրեն աղօթելու կը հրաւիրէր զիս։ Այն ատեն իբրև խորին թմբրութենէ մը արթնը-

© National Library of Armenia

ցայ. և այնչափ յուսահատութենէ և. սև այն առաջին անգամ որոխս մէջ յուսոյ թեթև կայծ մը ծագելն զգացի։ Ուրեմն քիչ հեռու եկեղեցի մը պիտի ըլլար. որուշեցի մեկէն որ խորանին առ. ջևն իյնամ, և հոն փուշոյն մէջ տարա. ծուած նուիրեմ զիս 'ի պատարագ Ա. ստուծոյ, 'ի դարմանն իմ ոճրագործու. թեանս։ Սկայ դէպ 'ի այն եկած ձայ. նին ուղղութեանը առաջ երթալ։ Ար. ծաթաճաճանչ լուսին մը երկնից պայ. ծառ և կապուտակ կամարին տակ կը փայլէր. կարծես թէ այս գիշերուան բանաստեղծական աստղը գլխաւիր ծի. ծաղով մը իմ զգաստութիւնս կ'ողջու. նէր, և իր արծաթափայլ լուսովը կը ցուցընէր այն տեղը, որուն մէջ վեր. ջապէս կրնայի գտնել այն խաղաղու. թիւնն, զոր այնչափ տարիներէ 'ի վեր կորուսեր էի։

Կը շարունակուի։

Ալճերիի հին և նոր ժառանգակաց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը։

Ալճերի՝ գաղղիական գաղթականու. թենէ և 1848ին 'ի վեր գաղղիական կա. լուած է, Ափրիկոյ հիւսիսային կողմը, ընդ մէջ Դունիզի վարչութեան յարևե. լից, յարևմտից՝ Մարոքի տէրութեան, 'ի հարաւոյ անսահման անապատին և 'ի հիւսիսոյ Միջերկրականի. 568 հա. զարամեդր հեռու է Գաղղիայէն, Բոր. վանտրէն առնելով, և 760 Մարսի. լիայէն, 200 Սպանիայէն, 400 Ճի. պրալդարի նեղուցէն, և 710 Իտալիայէն. ընդ մէջ 4° 28′ երկ. արևմտ. և 6° 20′ երկայն. արևել։ Հիւսիսէն հարաւ 750 հազարամեդր է և յարևելից յարևմուտս 850. մակերևոյթը դրեթէ 400,000 հա. զարամեդր քառակուսի, դրեթէ Գաղ. ղիոյ չափ և 1,100 հազարամեդր ծովա. փունքով։ Իսկ Միջերկրականին կղզի. ներէն՝ որոնք իրեն նաւահանգիստներն են Եւրոպայի յամրաքակողմը ծովափնա. յութիւն եղած ժամանակ, Բալէա. րեանցմէ 320 հազարամեդր հեռու է, Սարտենիայէն 300, Քորսիքայէն 360, Սիկիլիայէն 530 և Մալդայէն 655։

Ալճէրի՝ Ատլասի պարալերամիքը հատուածեալ է, որոնցմէ ընդարձակ լեռնապար մը կը տարածուի յարևելից Ալճէրի և կը կոչուի Ճիուրճիուրա (Jurjura)։ Ծովափունքն յարևելից յարև. մուտս Ֆիկալոյի, Ֆալքոնի, Քարպոնի, Իվիի, Քոլոմպիի, Դէնէզի, Սիտի–Ֆէր. րուխի, Մադիֆուի, Երկաթի (de Fer) և վարդի (de Rosa) սարերն կը ձևա. յընեն, և Օրանի, Արզէվի, Ալճէրի, Պուճիայի, Սզորայի և Պոնի ծոցերը։

Ջրոց գլխաւոր հոսանքն են յարևմը. տից յարևելս. Մուլուխա կամ Մուլու. քա կամ Մոլոքաթ, (հին անուամբ Մալվա), Մարոքի սահմանագլխին մօտ. Դաֆնա, (հին անուամբ Սիգա). Շելիֆ, Ռումմել, կամ Ուէտ–էլ–Քէ. պիր, (ըստ հնոց Ամբրակաս). Սէի. պուզ (ըստ հնոց Հռուբրիկատոս). Ուէտ–էլ–Պերպէր (ըստ հնոց Դուզգա). Մէժէրտահ, (ըստ հնոց Բագրադաս), դէպ 'ի արևելեան սահմանագլուխը։

Կլիման ընդհանուր խօսելով առողջ և բարեխառն է, 'ի բաց առեալ անցու. զական տաքերն՝ որ կը պատճառին 'ի խամսինէ կամ որ նոյն է՝ անապատին հովէն։ Լատագոյն և հեշտին եղանակը գարունն է. երկիրն ամենուրեք ուր որ կրնայ առողջուիլ բեղնաւոր է և հիա. նալի. որուն ճշդիւտ գաղափարը տա. լու համար բաւական է ըսելը թէ Մաւ. րիտանացւոց կնքանշանը (emblème) երբեակ հասկ էր։ Հոն կը բուսնի վայ. րենի ձիթենի, դալար կաղնի, թանձր ու մնկաւէտ թեղուշ, թզուկ արմաւե. նի, պինդ ցորեն և Ատլասի հար. կո. ղիցը վրայ արմաւենի։ Ջէյթ, իւղա. բեր ունդք, ափիոն, Պուֆֆարիքի ծխա. խոտը, մեռապս, բամբակ, որդան կար. միր, այս առաւոտապարգև երկրին գան. ձերն են։ Հոն վայրենի գազաններ եւ. րոպայի ընտանի կենդանեաց կը հան. դիպին. ջորեակքն ահեղ են և ճիտաս. կար, անուանի են նաև ձիոց գեղեցիկ



Ապա-էլ-Քադէրի Քանիքաաէն ըռուռաճ գուգնդը։

տեսակները։ Անոնցմէն 4,800,000 եկ-
ուար են, և նաւական չինուածեանց,
հիւանդութեան, բժշկագործութեան և
կրակի կիրառութեանց համար փայտ
կը մատակարարեն։ Ծովափունքէն կ'ելլ-
նէ հարուստ բուստ մը (մանուածրա-
պէս Պոնի մօտ)։ Գետինը շատ երկաթ,
պղինձ ու առատ ջերմկային աղբիւր-

ներ ունի։ Երեք բնական բաժանմանց
վերածուած է. Ա՝. է Դէլ՝ ի հիւսիսոյ
Ատլասի, որ ըլրոց և արմտեաց երկիր
է։ Բ. Ատլաս։ Գ. Սահարա՝ դէպ՝ ի
հարաւ՝ որ ինչուան անապատը կը տա-
րածուի. և այս Արաբներու երկիր է։

Արդի Ալճէրին կազմող երկիրը՝ Հը-
ռովմայեցւոց տիրապետութեանց տակ

© National Library of Armenia



Զուռաւոր։

կը պարունակէր այն նահանգներն որ են յարեւելից Նումիդիոյ կեսարեան և յարեւելից Սիտիփեան Մաւրիտանիոյ, ընդ մէջ Տէնգիտեան Մաւրիտանիոյ (Մարոք), և յատկապէս Ափրիկէ կոչեցեալ նահանգը՝ ուր էր Կարթեդոն (հիմա իշխանութիւն Դունուզի)։ Հռոմէական 33 գաղթականութիւնք միակութիւնն ու քաղաքականութիւնը մեծապէս զարգացուցին հոն։ Վանտալք տիրեցին այնմ՚ի մէջ ե. դարուն զոր յունական կայսրութիւնը յափշտակեց իրենցմէ 534ին. Հուսկ ուրեմն Աբբասեանք հաստատուեցան Ը. դարուն սկիզբէն, և երկրին հին ժողովրդոցն հետ, որք են Նումիդացիք, Մաւրիտանացիք և Պէրպէրք՝ չփոթեցան. Հռովմէական բարեկրթութեան նշխարեալ մնացորդները հազիւ հազ վերականգնեցին և 935ին Ալ-Ջէզայիր քաղաքն հիմնեցին, հին Իկոսիոնի կամ Ծոմնիոնի տեղւոյն վրայ։ Չէրիւհեան Աբա-

© National Library of Armenia

բացիք ինչուան 1148 իշխեցին. յետոյ Ալմոհատեանք մինչև 1269. յետոյ խումբ մը հարստութեանց կամ անկախ ցեղեր։ Մաւրիտանացիք Սպանիայէն վտարուելով 1432ին դարձան վերստին յԱֆրէի և յելուզակութեան ձեռք զարկին՝ որ սովորական էր իրենց ցեղին։ Ան ատեն սկան այն ասպատակութիւնքն զոր ալճէրեան հէնք կ'ընէին ամեն մերձաւոր ծովափանց վրայ։ Մինչդեռ Սպանիա Ափրիկոյ մէջ քրիստոնէութեան թշնամի մահմետականները կը հալածէր՝ չանաց զիրենք ալ չախչախել։ Փերտինանտոս Ե. և Խաւիեռնէս Ծիրանաւորը 1509ին տիրեցին Օրանի և Պուճիոյ, և 1510ին Ալճէրի։ Արմուճ–Պարպարոսա՝ Տաճկաստանի յելուզակն, Ափրիկէի էմիրներէն հրաւէրք ընդունելով՝ 1516ին իրենց օգնութեան եկաւ և յԱփրիկէ տաճկական իշխանութիւնն հաստատեց, ինքզինքն Ալճէրի և յետոյ Տլեմսէնի սուլդան անուանեց։ Քայր–էլ–տին Պարպարոսա եղբայրը 1518ին պայազատեց զինքը, որ նոր տէրութեամբը սուլդան Սելիմի հպատակելով օգնութիւն գտաւ իրմէ, յաղթեց Սպանիացւոց, և քրիստոնեայ գերեաց աշխատութեամբը կանգնեց այն չրաթումբն որ Ալճէրը կը միացընէ հանդիպակաց կըղզւոյն հետ։ Իրեն յաջորդեց Հասան–Աղա. և 1541ին կարլոս Ե'ի զուր փորձեց այս հէնքերն ընկճել. Օրան միայն Ճնաց Սպանիոյ ինչուան 1708, որ 1554ին զՊուճիա ևս կորսնցուցեր էր։ 1600ին եհնիչէրաց խմբէն մէկու մը Տէյ ա նուանակոչուելովը՝ եպարքոսին (փաշայ) տիրապետութեանը մնանակից ըլլալու համար, ներքին հակառակութեանց սկզբնապատճառ եղաւ, բայց դարձեալ այսու ևս չնուազեցան ալճերեան յելուզակք։ Ս. Վինկենտիոս Պաւլայեցին և Ռընեար գերի տարուեցան յԱլճէր։ Լուդովիկոս ԺԴ, ռմբակոծել տուաւ զԱլճէր 1682ին, յուլիսի 25ին և 1683ին յունիսի 28ին և 1687ին յունիսի 26ին։ Անգղիացի և Հոլանտացի տորմիղաց յարձակմունքն 1655ին, 1669ին և 1670ին չյաջողեցան այլ ևս. նոյն իսկ Անգղիացիք դաշինք կռնեցին Տէյի հետ 1662ին։ Ժ. դարուն սկիզբէն Պապա–Ալի Տէյը Դռնէն անկախ եղեր էր։ Վերստին ընկճեց Սպանիա զՕրան մինչև 1731։ Վերջին սպանիական արշաւանաց մ'ալ փորձն եղաւ 1775ին։ Միացեալ–Նահանգաց նաւատորմիղը 1815ին ստիպեց զՀինս որ իր դրօշը մեծարեն։ 1816ին օգոստոսի 27ին դարձեալ ռմբակոծեցին զԱլճէրի Անգղիացիք և Հոլանտացիք. այլ անիկա իրեն ծովային յելուզակները չարունակեց մինչև ցՀիսպային ծով։ Գաղղիա յանձն առաւ կատարել Սպանիոյ երկայն ժամանակ ըրած փորձը. Տէյը՝ Ալճէրի նստոյ Տըվալ անուն Գաղղիոյ դեսպանին երեսին հովահարովը զարկած ըլլալով, Գաղղիոյ նաւատորմիղը Տիւբէյրէ փոխադրովականին հրամանատարութեամբը պաշարեց զԱլճէրի 1827ին յունիսի 12ին, բանակ մը՝ Պուրմոնէ փոխազօրավարին առաջնորդութեամբը՝ ի Սիտի–Ֆէրրուխ ցամաք ելաւ 1830ին յունիսի 14ին, և Ալճէրի տէրն անձնատուր եղաւ յուլիսի 5ին. անցեալս կենաց ստիպեցաւ տէրութենէն դուրս ելլելու։

Ա.յն ատեն սկսաւ գաղղիական տիրապետութիւնն յԱլճէրի. Քլոզել, Պէրթըզէն զօրավարները 1831ին, տը Սաւարի 1831–33, Վուարոլ և Տեմիշել հրամանատար եղան նախ Հոն. առին զՊուճիա (սեպտ. 1833) և քաղինէրուն ու Պէտէվիներուն դէմ կռուեցան, որոնք զիրենք ամենայն իշխանութենէ աղատ կը կարծէին։ 1834ին ՚ի վեր Ալճէրի կուսակալ–զօրավար մ'ուներցաւ. և այս դժուարին պաշտօնն սկըսաւ Ջրուէ տ' Էրլոն կոմս զօրավարը և վարեց 1834ին սեպտ. 28, մինչև 1835 օգոստ. 10. Քլոզել մարշալախտը ինչուան 1837ին փետրուարը. Տամրէմոնի զօրավարը, որ սպանաւ կոստանդինայի առման ժամանակը, մինչև 1837 հոկտ. 13. Վալէ մարշալախտը մինչև 1841 փետր. 22, Պիւժոյ զօրավարն ինչուան 1847ին մայիսը. Օմալի դուքսը, գավէնեաք զօրավարը մինչև 1848ի

© National Library of Armenia

փետրուարը. Շանկառնիէ զօրավարը մայիսի մէջ. Շարրոն զօրավարը սեպտեմբերի մէջ։

Ընդդիմակալութեան գլխաւորն էր 1831ին՝ի վեր Ապտ–էլ–Քատէր. 1837ին մայիսի 30ին Դաֆնայի դաշնագրութեամբ կը հաստատուէր Գաղղիոյ գերագահ իշխանութիւնը, բայց կը ճանչցուէր նաև Էմիրին իշխանութիւնը Օրանի՝ Դիզէրի և Ալճէրի նահանգաց վրայ, ի բաց առեալ Օրան, Արզէվ, Մազակրան, Մոսթականեմ, Ալճէր, Պլիտահ և Քոլէահ, Սահել ու Մէդիճա քաղաքները։ Կոստանդինայի նահանգը՝ քաղաքին առնուելէն ետքն իսկ, 1837ին ապրիլի 3ին, երկու տարի վերջը ընկճեցաւ. իսկ Բորդ–ը–Ֆէրի արշաւանաք վալէ մարալխատին և Օալէանի դքսին ձեռքով այս բանս՝ի գլուխ կը հանուէր 1838ին։ Ապտ–էլ–Քատէր կը միացընէր հիւսիսային ամենայն ցեղերը, և 1839ին նոյեմբերի մէջ դաշինքը հաստատելով, յանկարծակի Գաղղիացոց վրայ յարձակեցաւ, և Արաբացիք եկան նոյն իսկ Ալճէրի դռներուն առջև բանակեցան. 1840ին Գաղղիա այս դժբաղդութիւնը դարմանելու աշխատեցաւ, և դարնան ժամնակ հանդիպեցաւ Մազակրանի դիւցազնական դրուագը։ Երբ Պիւժոյ զօրավարն հասաւ՝ փոխեց պաշտպանողական դրութիւնը. իր յարձիանները ոչ երբեք հանդիստ թողին արաբացոց ցեղերը, և Էմիրի վրայ ըրած մեծամեծ արշաւանքն անոր հարթաւը նուաղեցուց։ Պիւժոյ մայիսի 30ին առաւ զՄասքարա, յաջորդեց մինչև Մարոքի սահմանագլուխը և առաւ զԴլէմսէն 1842ին յունուարի 30ին։ 1844ին օգոստոսի 14ին զարկաւ յաղթեց յիղլի՝ Մարոքի սուլթանին, մինչդեռ ժոէնվիլ իշխանն՝ի ծովէ կը ռմբակոծէր զԴանճէր (օգոստ. 6.) և զՄոկատոր (օգոստ. 10.) և Ապտ–էլ–Քատէրի դաշնակցութիւնը ցրուեց։ Պիւժոյ զօրավարը շատ անգամ յաղթեց Էմիրին, որ Մարոքի սուլթանին դէմ պատերազմելէն ետքը, Մուլուխայի մօտ Գաղղիացիներէն պատեցաւ և անձնատուր եղաւ 1847ին դեկտեմբերի։ Իսկ Հէրպիյոն զօրավարին զՄասչա առնելը 1843ին նոյեմբերի, Սահելի ցեղից դէմ արշաւանք մը 1850ին, և Լակուայի առումը 1852ին դեկտ. 4ին, Ուարկլայի չերիֆին յաղթուիլը 1853ին, ընդդէմ Սէպաու արշաւանքը, Դուկկուրի առնուիլը, և խռովիչ Պու–Պակլայի մահը 1854ին, ընդդէմ՝ պէյնի Մնասէնի ճակատամարտն՝ի Մարտ 1859ին և արևել. Քապիլի մարտակռիւն 1860ին, Ալճէրիի մէջ հանդիպած վերջին դէպքերն են։

Կը շարունակուի։

Ա.

Արևելեան ազգաց մէջ Թորգոմեան ցեղը՝ Հայք և Թուրք՝ ամեն միւս ազգերէ աւելի սիրող են պաղատու ծառոց և այգեաց։ Ամեն տուն կ'ախորժի գէթ ունենալ փոքր պարտէզ մը. և անոր մէջ ալ իւր սիրած տեսակէն մէկ քանի ծառ։ Աւելի ցաւ կ'իմանայ գիւղական Թուրքը իւր պարտէզի մէկ ծառն չորնալուն վրայ՝ քան թէ իւր կնոջ խաւարելուն վրայ։ Արևելք ճանապարհող գիտնոյ գրուածքներուն նայելով չկայ Ասիոյ մէջ Հայոց պէս պարտիզասէր ժողովուրդ. որք իրենց պարտէզները արբուցանելու համար ամեն հնար կը գտնեն ու ճարտարութիւն՝ի գործ դրած են։ Եւ յիրաւի, Ասիոյ ցամաքատանին ամեն մեծ քաղաքներու չորչորալորը մեծամեծ ծառատնկութեամբ պճնուած են։ Այս պարտէզները ոչ միայն իրենց համեղաճաշակ պտղով բնակչաց ախորժը կը լնուն, այլ և հեշտալի վայրք և զովասէր ճեմելիք եղած են անոնց պարապոյ ժամերը իրենց զովագին ստուերներուն տակը անցուցնել տալու։ Ծառի հովանւոյ տակ նըստիլ, պառակիլ, ճաշել, խաղալ, ցաւգենալ՝ ասիացւոյն տրուած է. այդչափ հեշտութիւն կ'իմանան այդ ծառատեր ժողովուրդները ծառոց ընկերակցութենէն։ Ծառ մը մեծնալէն ետքը՝

© National Library of Armenia

թէպէտ և տանեաց վրայ մեծցած ըլլայ, թուրքը անոր ձեռք չվերցուներ. աւելի յանձ կառնու որ տանիքը խարխլին քան թէ ծառը արմատէն քանցուի: Եթէ այսչափը սիրել է, այսչափ է ահա ա- սիացւոց ծառ սիրելը: Անոնց ծառ սի- րելը միայն ծառը տնկելն ու վրայ կե- ցած է. անգամ մը տնկելէն ետքը բնու- թեան կը թողուն, կ'ուզեն որ Աստուած աճեցունէ. կը կարծեն որ ծառերը ա- ռանց օգնականութեան և խնամուելու կրնան իրենք իրենցմէ աճիլ ու պտղա- բեր ըլլալ. փոխանակ զի գիտնալու էին, որ ծառ մը չկրնար ուռճանալ, բնաիր պտուղ երևցունել և երկայնակեաց ըլ- լալ՝ մինչև օգնութիւն չգտնէ կամ 'ի բնութենէ և կամ խնամող ձեռքէ: Բնու- թիւնը ծառոց կ'օգնէ կլիմայի ազդե- ցութեամբք, տարերաց զօրութեամբք և գետնի բաղադրիչ տարրական հիւ- թերով. իսկ մշակը բնութեան գոր- ծակից կ'ըլլայ՝ անոր պակասը լեցունե- լով, ծառին սիրած սնունդը պէտք եղա- ծին չափ տալով, և ուր բնութիւնը կ'ան- կարանայ իր ազդեցութիւնքը ներ- գործել՝ մշակը ինչպէս թէ միջնորդ կե- ցած՝ ճամբաներ կը պատրաստէ և կը դիւրացունէ, որպէս զի բնութիւնը կա- րենայ իր գործը կատարել:

Ամենիմաստ և ամենաճարտարն Ա-ստուած բուսական արարածքը ստեղծե- լու ատեն անոնց գոյութեան մէջ դրեր է զօրութիւն կենսական և աճումն, և ասոնց հետ մէկտեղ մեծ կարողութիւն մ'ալ կատարելագործուելու: Մշակն է ծառերը 'ի կատարելութիւն հասցու- նողը:

Եթէ տեսանենք նմանահող գետնի վը- րայ երկու ծառ, որ մի և նոյն ժամանակի մէջ իրարու մօտ տնկուելով՝ մէկը իւր ա- ռոյգ և քաջառողջ հասակին մէջ իւր բո- լորշի ճիւղերով հիանալի կերպով ուռ- ճացեր է, և միւսը ծիւրեալ և հիւան- դագին, համոզուելու ենք որ եթէ եր- կուքը մի և նոյն կլիմայի և տարերաց ազդեցութիւնը կրելով այս աստիճան զանազանուեր են իրարմէ, 'ի հարկէ ծառոյն կամ գետնին կողմանէ ներքին պատճառ մը կայ աճման արգելիչ. հոս է ահա մշակին յօգնութիւն հասնելու ժամանակը:

Կտոր մը աչալուրջ եղող մշակը կրնայ դիտած ըլլալ, որ մի և նոյն բաղադրու- թիւն ունող գետնի վրայ ամեն տեսակ ծառ չկրնար հաւասարապէս յառաջ գալ. այլ բաղադրութիւն հողոյ կ'ուզէ տանձը, այլ դեղձը. դարձեալ՝ այլ կերպ հող և դարման կ'ուզէ այս տեսակ տան- ձը և այլ կերպ դարման մէկ այլ տե- սակ տանձը:— Եթէ իւր դիտողութիւն- քը կտոր մըն ալ յառաջ մղէ՝ կրնայ տեսնել, որ զով և անոյշ հողերու վրայ տնկուած այգին ողջարմատ կ'ըլլայ և առատ պտուղ կու տայ, բայց ոչ այնչափ համեղ. ընդհակառակն այն այգին որ չոր ու կրային հողի վրայ տնկուած է՝ իրաւ քիչ բերք կ'ունենայ, բայց պտուղը շատ աւելի համեղ ու յարգի կ'ըլլայ:— Դարձեալ՝ կրնայ դիտած ըլլալ որ գետնի մը դիրքն ու կայքը մեծ ազդե- ցութիւն ունին ծառոց չատարդիւն ըլ- լալուն վրայ և պտղոց կանխահաս և համեղաճաշակ ըլլալուն վրայ:— Ա- յս համառօտ բսածներէս այն կ'իմացուի, որ տնկադարմանութիւնը մեծ գիտու- թիւն կ'ուզէ, վասն զի բարակ արուեստ է. բուսոց բնութեան և անդեան վրայ անբաւ գիտելիք կան, և գիտնալու է անոնց ամեն մէկ պիտոյից ժամուն օգ- նութիւն հասնիլ:

Ոսատ ու ճշմարտապէս սիրող է տնկադարմանութեան, հարկաւոր է գիտնայ նախ՝ թէ կլիմայից ազդեցու- թիւնը ինչ կերպով է տնկոց վրայ, և պէտք է տեղեակ ըլլայ տարրագիտու- թեան և բնաբանութեան սկզբանց: Եւ երկրորդ՝ թէ բուսոց կազմուածքն ու անանելու կերպը ինչպէս է. ճանչնայ ծառերն ու անոնց տեսակները, և տըն- կուելու հողին ու գետնին այլևայլ հան- գամանքը. գիտնայ թէ ինչ տեսակ պարարիչ կ'ուզեն, ինչ սկզբամբ և ա- րուեստիւ զանոնք յօտելու է, ինչ ե- ղանակաւ բազմացունելու և պատուաս- տելու է, ու կերպով զանոնք հիւան- դութենէ կամ թշնամիներէ պահպա-

© National Library of Armenia

նելու է, և վերջապէս անոնցմէ ելած արդիւնքը ինչպէս չահաւէտ ընելու է։

Ահա ըստ այս երկրորդ կարգի նիւթոց բազմավէպս ալ յաջորդաբար ծառանկուվթեան վրայ խօսելու կամք ունի՝ փափաքելով դէթ ըստ մասին ընուլ հայախօս և հայագիր յօժարողաց թախանձանքը։ Միայն սա չափը կանխեալ կը զուրցեմք, որ բազմավիպիս սահմանը յոյժ անձուկ ըլլալով, անհնար է որ ծառանկուվթեան արուեստին ամեն գաղտնիքը կարենանք լիապէս աւանդել։ Գոհ ըլլալու ենք, եթէ կարող ըլլանք յայտնաբանել նորա ճշմարիտ սկզբունքներն և ստոյգ գիտցածնիս, թողլով ի բաց այն որ դեռ փորձի և քննուվթեան կը կարօտի, այն որ տարակուսական է, և այն որ այժմու ծառասերոց իմանալու կարողուվթենէն վեր է։

Ծառ.

Ծառ ըսելով կը հասկանանք այն բոյսերն որ փայտային են և մի բուն ունին. կեանքերնին հասարակ բուսոց պէս միամեայ չէ, այլ ընդհակառակն տասը քսան տարի՝ և աննկէ ալ յոյժ շատ աւելի կրնան ապրիլ։

Բովանդակ ծառերը երկու մեծ խումբի կրնանք վերածել. նախ՝ անոնք որ ուսելի պտուղ ունին և կը կոչուին պտղատու ծառ, և երկրորդ՝ անոնք որ ուսելի պտուղ չունենալով պիտուականն են չինուածոց՝ նաւակերտից՝ և այլ այնչափ անթիւ պիտոյից մարդոյ. որ կը կոչուին նաև վայրի կամ անտառի ծառեր։ — Մեր այժմու գլխաւոր նպատակը պտղատու ծառոց վրայ խօսել է. բայց անտի յառաջ կ'ուզեմք ընդհանուր բուսոց կազմակերպուվթեան, և աճելուն ու սնանելուն վրայ ճառել։

Ինչպէս կենդանական մարմինք՝ այսպէս և բուսական արարածք իրենց կենաց պահպանուվթեանը համար ունին աճելու և բազմաւորուելու հարկաւոր գործարանները։ — Աճելու համար ունեցած գործարանին են արմատ, ոստ, աչք, տերև։ իսկ բազմաւորուելու համար ունեցած գործարանին են ծաղիկը, սերմն կամ պտուղը։

Բուսոց պահպանուվթեանը համար հարկաւոր եղած գործարանիք։

Արմատ։ — Արմատ կ'ըսուի բոյսին այն մասը, որ միշտ լոյսէ խորշելով կը ձկտի հողի տակ մնալու։ Իւր պաշտօնն է տունկը ոտքի վրայ հաստատ կեցուցանել. բայց ասկէ աւելի՝ բոյսին աճելուն և սնանելուն համար հարկաւոր եղած նիւթերը գետնէն ժողովել։

Բունին վրայ՝ ուր արմատը կը սկզբնաւորի ծառնկ (collet) կ'ըսուի՝ որ բունէն շատ աւելի հաստ և ուռած կ'ըլլայ։ Այս ծունկը ծառին վրայ ինչպէս կեդրոն աճման է. վասն զի այն կտորէն սկսեալ ծառը դէպ յերկինք կ'աճի կ'երկայնի, անտի ի վայր՝ արմատը դէպ ի խոնարհ կ'աճի կ'երկայնի։ Կան բոյսեր ու ծառեր՝ ինչպէս են բողկը [1], գազարը [2], ցախը [3], իտալական կաղամախը [4] և այլն, որ իրենց արմատը առանց հերձելու և ճեղաւորելու միաբուն և միակտուր չիտակ ի խոր կ'իջեցունեն։ Այս տեսակ ծառերը ուղղաբար (pivotant) կը կոչուին, և այս տեսակ չիտակ արմատն ալ բնաբար (pivot) կը կոչուի։ Իսկ ուրիշ ամեն տունկ և ծառ բնաբար մը ունենալէն զատ՝ նաև նոյնին վրայ կողմնական բազում ճիւղեր կ'արձակեն, որք դարձեալ ամենն առ հասարակ հորիզոնադիր քալուածքով մը գետնի տակէն յառաջ կ'երթան, ու դարձեալ անթուելի տակաւիճներ արձակելով գետնին կը տիրեն, ու անտի իրենց ծայրերովը իրենց աննդեան յարմար գտած հիւթերն ու ջուրը կը ծծեն ու կ'երկայնին. անոր համար արմատոց ծայրերը միշտ նոր ու մատղաշ են, և երբեմն մինչև այն ատիճան բարակ ու նրբաթել, զոր բու-

1 Բողկ. տճ. Թուրբ. գղ. Navet.
2 Գազար. տճ. Հալաճ. գղ. Carotte.
3 Ցախ. տճ. Տիղոփաթ. գղ. Frêne.
4 Կաղամախ իտալական. տճ. Իթալիա գավաղը. գղ. Peuplier d' Italie.

© National Library of Armenia

սարանք ծծինդ կամ մազկոշ (chevelure) կոչեցին։

Ա֊յն արմատները որ մի տարուան մէջ կը ծլին կը ծաղկին կը պտղին և յետ այնորիկ կը չորնան պարզաւոր կամ դաւեայ (annuel) արմատ կը կոչուին, ինչպիսի են ցորեան, գարի, բամբակ, ոլոռ, բակլայ, և այլ բազումք անթիւ։ — Ա֊յն արմատները՝ որ երկու տարի ապրելէն ետքը պտուղ կու տան և յետոյ կը մեռնին, երկաւեայ (bisannuel) արմատ կ'ըսուին. ինչպէս են ստեպղինը [1], չաղգամը, կաղամբը և այլն։ — Ա֊յն արմատները որ շատ տարի կ'ապրին, և պտուղ տալէն ետքը կը չարունակեն իրենց կեանքը ամեն տարի յաջողադաբար պտղելով, ասոնք ջաւակեայ (vivace) արմատ կ'ըսուին. բուսոց մէջ ծնեբեկը [2], առուտյատ [3], եղինճը [4], սէղը [5], եղէգը [6], շատակեցութեան օրինակ կրնան ըլլալ քեզի, իսկ փայտաւորներէն՝ ամեն վայրի ու պտղատու ծառերը, որոնց կեանքը յանապահմանս կը ձգտի։

Տնկագործութեան վրայ խօսած առեննիս պիտի զրուցենք թէ արմատը ինչ օրինակ յարդարելու է։

Ոտիկ (tige)։ Ծառի գետնէն դուրս երևցած մասին աճումը՝ հակառակ արմատին աճման՝ դէպ 'ի վեր է։ Բոյսը՝ սկսեալ արմատի բերնէն՝ զոր ծունկ անուանեցինք՝ շիտակ կ'ելլէ մինչև 'ի վեր կամ մինչև առ մի չափ։ Ա֊յս շիտակ ելած կտորը հասարակ բառով ոտիկ կ'ըսուի։ Սիզային (graminées) խոտոց ուղէջը ցօղուն կամ ծղօտ (chaume) կ'անուանեմք, հասարակ բուսոցը ծեղ, և փայտաւոր ծառոցը բուն։

Բունը քիչ մը տեղ ուղղակի միակտուր բարձրանալէն ետքը կամ կը բաժանի յայլևայլ ճիւղ, կամ թէ չէ՝ կողմնական ճիւղեր կ'արձակէ։ Բունը իբրև թէ ծառին սիւնն ու ամրութիւնն է, և որուն վրայ կեցած է ծառին շինուածքը ճիւղերով ոստերով ու տերևներով։

Բունին վրայ առաջին նետուած թեւերը անուանելու ենք ճիւղ կամ բազուկ (branche). ճիւղին վրայէն ելած նոր թևերը ոստ (rameau). ոստերուն վրայէն ելած ծայրերը ճեղ (bourgeons). ճեղն ալ երբ դեռ նոր ելած և մատղաշ է՝ բողբոջ։

Ոստի բուսոց աճումը միշտ բողբոջէն կը սկսի, և հիննալով ճեղ՝ ոստ, ճիւղ անունները կ'առնու։ Ըսել է որ՝ բողբոջը կամ ճեղը ծառի մը աճման առաջին վիճակն է, որ գարնան ժամանակ աչքէ մը դուրս կը ցցուի, աճելով կ'երկայնի, և մինչև որ նոյն տարուան աճումը դադրի, ճեղ կոչուիլը կը պահէ։ Ա֊յնան վերջերը ճեղը իւր աճման ընթացքը կատարած կ'ըլլայ և ոստ անուանած. և այն ատեն կը տեսնուի իր վրայ ամեն մէկ տերևի հետ մի մի աչք, որոնցմէ 'ի յաջորդ գարնան կ'ելլեն նոր նոր բողբոջները, որք առջինին պէս կ'երկննան մինչև յաշուն՝ այնուհետև ճեղը կը կոչուի ճիւղ, կամ եթէ կարի հաստ է՝ բազուկ։

Ճեղերու և ոստերու վրայ դեռ շատ զուրցելիք ունինք՝ երբ ատենը գայ ճառել ծառերը յօտելու վրայ։

Եթէ ծառի մը բունը ընդ լայնութիւնը շիտակ կտրենք, հոն երեք գործարան կը տեսնեմք. որ ասոնք են, մէջտեղի կեդրոնի վրայ ծո֊ծ (moëlle), յետոյ փայտային մարմին (corp ligneux), յետոյ կեղև (écorce)։

Բունին մէջ տեղը վերէն մինչև 'ի ծունկ՝ ինչպէս նաև ամեն ճիւղերու և ոստերու մէջ ծայրէ 'ի ծայր փողերակ կայ՝ ճերմակ անկանման բուրդով մը լեցուն, որ նմանութեամբ ծո֊ծ որ և ըզպոռակ կ'անուանի։ Մատղաշ ծեղերու փողերակը աւելի լայն՝ ու մէջի ծուծն ալ առատ է՝ քան թէ հասուցած փայտերունը. վասն զի ծուծը հիննալով կը պնդանայ, և շրջակայ փայտին հետ կը միաւորի. այնպէս որ կարի ծեր ու հաս-

1 Ստեպղին. առ. Հալառ. գղ. Carotte.
2 Ծնեբեկ. առ. Քոչ գծնդաղ գղ. Asperge.
3 Առուտյատ. առ. Եօնճա. գղ. Trèfle.
4 Եղինճ. առ. Ըսբղան. գղ. Ortie.
5 Սէղ. առ. Աչըէ. գղ. Chien-dent.
6 Եղէգ. առ. Գամըշ. գղ. Canne.

© National Library of Armenia

տըցած ծառերու փողերակը գրեթէ քացած է և հազիւ կը նշմարի։

Ծուծի փողերակէն մինչև 'ի կեղև գտուած միջոցը փայտային մարմին է. բայց մի՛ կարծեր թէ այս փայտային մարմինը խառն 'ի խուռն կեցած է, այլ խաւ 'ի խաւ դրուած վրայէ վրայ՝ ինչպէս թէ բաղում խողովակք մէջէ մէջ անցած ըլլան ու իրարու հետ միաւորած։ — ինչպէս եղեր է բացատրենք։

Համարէ թէ նորահաս տունկ մը 'ի գարնան գետնէն բուսնելով մէկ տարուան մէջ հասաւ 'ի դրչի հաստութիւն։ երկրորդ տարին նորէն աճեց և հաստըցաւ. բայց նոր ստացած հաստութիւնքը առջինին վրայ ընդունեցաւ դուրսէն։ Այս երկու տարուան հաստութիւնքը իրարու եկան՝ միացան, բայց անխառն մնացին։ երրորդ տարին տունկը գարձեալ աճելով, եարի առած մարմինը նախընթաց տարուանին վրայ հագաւ, բայց անցած տարուան առածին հետ չշփոթեցաւ. անոր հետ նոյնացաւ, բայց կարգով երրորդ ըլլալը նշանագծով մը իմացուց։ Այսպէս ամեն տարի փայտային նոր խաւ մը կ'աւելնայ անցեալ տարւոյն խաւին վրայ, և ասանկով ծառը երթալով կը հաստընայ։ Աւրդ աստի կրհետևցունեմք որ եթէ ընդ լայնութիւն կտրած փայտին վրայ տան կամ քսան կամ երեսուն օղակները վրայէ վրայ ազուցած գտնենք, այն ծառն ալ ատուգապէս տան կամ քսան կամ երեսուն տարեկան եղած կ'ըլլայ։ կտրած ծառին տարիքը ըսած կերպովս կը ճանաչուի։

Եթէ մանրացոյց ապակիով դիտենք ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն կտրած փայտին երեսները, իսկոյն կը համոզուինք՝ որ փայտին ամբողջ զանգուածը ձևացած է անթիւ և ան համար մանր փողակներու քովէ քով գալովը։ Այս փողակները ջիլերու և առէջքներու մէջ՝ ինչպէս թէ ցանցի մէջ ժողոված ու իրարու հետ ամրապնդած են։

փայտային մարմինը գլխաւոր երկու որոշ մաս ունի, այսինքն մայր փայտ (bois parfait). և կեսոփայտ (aubier)։ Ծուծի փողերակին չրջակայքը գտուած առաջին խաւերը հինալով կը սեղմին ու կը պնդանան, որով այն սեղմ կտորը մայր փայտ կամ կատարեալ փայտ կ'անուանի և գոյնով ալ թուխ կ'ըլլայ։ Իսկ կեղևին մօտ եղած խաւերը շատ աւելի մրջի թոյլ կակուղ և բացագոյն ըլլալնուն համար՝ կեսոփայտ կամ Ընբափայտ կը համարուին, որուն գեղջուկ պարտիզապանք իրենց լեզուով Դօ կ'ըսեն։ Թէպէտ և ամեն հաստ փայտի վրայ կը տեսնուի այս երկու զանազանութիւնը, բայց աւելի զգալի է Ամերիկայէն եկած Ծիրանափայտին [1] վրայ, որուն մայր փայտը կարմիր կ'ըլլայ՝ և Թերփայտը դեղին. Եբենոսի [2] մայր փայտը սեաւ՝ Թերփայտը սպիտակ, ընկուզի մայր փայտը թուխ՝ Թերփայտը մոխրագոյն, Թթենւոյ մայր փայտը թրուն՝ Թերփայտը դեղին. խնձորենւոյ և տանձենւոյ մայր փայտը հունապի՝ Թերփայտը կինամոն, և այլն։ Իսկ ճերմակափայտ ծառերը՝ ինչպէս են լորի [3] չագանակ [4] հացի [5] եղևին [6] կաղամախ [7] և այլն, Թէպէտ և այս երկու գունոց զանազանութիւնքը չունին, բայց պընդութեան կողմանէ անոնց մայր փայտը շատ աւելի սեղմ է՝ քան Թէ իրենց Թերփայտը։

Կեղև (écorce)։ փայտային մարմնոյն արտաքին երեսը կեղևով պատած է ոստերուն վերի ծայրէն սկսեալ մինչև արմատոց յետին ծայրերը. ըսել է՝ ամբողջ ծառը, կեղևի մէջ առնուած է, և իբրև Թէ պատեանի մը մէջ սեղմուած՝ կը պաշտպանուի, ոչ միայն դուրսի օդին ժանտութենէն, հովերէն, ցուրտէն ու չոգէն, այլ և արմատներն ալ գետնի սառնամանիքներէն ու կերչաց հարուածներէն։

Կեղևին վրայ երեք դիտելիք ունիմք,

1 Ծիրանափայտ. տձ. Խամ պագամ. գղ. Campèche.
2 Եբենոս. տձ. Ապանոզ. գղ. Ebène.
3 Լորի. տձ. Օհլամոր. գղ. Tilleul.
4 Շագանակ. տձ. Քէսթանէ. գղ. Châtaignier.
5 Հացի. տձ. Սէրբէպան. գղ. Erable.
6 Եղևին. տձ. Շամ. գղ. Sapin.
7 Կաղամախ. տձ. Գասափ. գղ. Peuplier.

© National Library of Armenia

որ են մաշկը (épiderme), բուն կեղև (les couches corticales) և խծիծը (liber):

Մաշկը (épiderme) կեղևին դուրսի երեսին վրայ պատած կարծր և փայլուն թաղանթն է, որ զկեղևը կը պահպանէ օդոց ցասմունքներէն:

Բուն կեղևը (les couches corticales), որ փայտին կազմուածքին նման անթիւ և անհամար քովէքով եկած փողակներով ձևացած է:

Խծիծ (liber) Քլամաւոր, օձլամաւոր են բարակ շապիկներ կարգ կարգ վրայէ վրայ դրուած, և իբրև ներքնակ՝ փայտային մերկ մարմնոյն վրայ հագուցած անմիջապէս կեղևին տակէն:

Ինչպէս՝ի վեր անդր փայտային մարմնոյն համար զուրցեցինք՝ թէ ամեն տարի նոր խաւ փայտի յաւելանայ իր առաջին հաստութեանը վրայ, այսպէս հոս ալ՝ ամեն տարի նոր կարգ մը կ՝աւելնայ խծիծի շապկին վրայ, և ծառին հնանալովը խծիծին հին կարգերը կը պնդանան, և կ՝եղևին հետ միանալով անոր հաստութիւնը կ՝աւելցունեն:

Աչք (bouton, ἔμμυον): Ծառոց աչքը սովորաբար ոստերուն ծայրը և ամեն տերևներու հետ կը գտուի: Ամեն աչք բարակ և բազմաթեփ պատեանի մէջ պահպանուած է. և սովորաբար տարիի մը չափ ժամանակ անշարժ կենալէն ետքը՝ գարնան առեն կը շարժի ու կը ցցուի. որ առեն կը սկսի պոռոկ (œil) կոչուիլ, որմէ ետքը բողբոջ, անկէ ետքն ալ բարոնակ կ՝ըլլայ. ըսել է որ ծառը մեծցունողը աչքն է: Ծառը՝ի ձեռն աչքի դէպ յերկայնութիւն կ՝աճի կը բարձրանայ, և՝ի ձեռն փայտային խաւերու դէպ՝ի լայնութիւն կ՝աճի ու կը հաստընայ:

Պատուաստի և յօտի վրայ խօսելու առեննիս՝ աչքի վրայ շատ զուրցելիք ունինք:

Տերև (feuille): Ծառի տերևը՝ ինչպէս ամենուն ծանօթ է՝ ունի երկու մաս՝ կանաչագոյն տարածուած ընդրիը, որ ըստ ցեղից և տեսակաց այլ և այլ ձև կ՝ունենայ:

Կանթիը կամ կոթը տերևը ծառին հետ միաւորող բունն է, որուն մէջ ծայրէ՝ի ծայր ծակ ունենալով ծուծի փողերակին հետ հաղորդակից է:

Կանթը մինչև տերևին ծայրը կը հասնի. և տերևին եռևի կողմէն ճեղաւորուելով՝ անթաւ մանր թևեր կ՝առձակէ, և կը գրաւէ բոլոր անոր երեսը եղերքէ եղերք, այն է որ երակ փերթոց (les nervures) կը զուրցեմք: Այս անթիւ նուրբ երակներուն և ամենամանր փողակներու և առէջքներու քովէ քով և տարածուած կենալովը ձևացած են ծառոց տերևք:

Տերևներուն կեանքը ժամանակաւոր է. կան՝ որ քանի մը ամիս ծառի վրայ կենալէն ետքը աշունքի առեն կ՝իյնան, կան՝ որ ծառի վրայ կը չորնան ու կը ճնան, և չթափին՝ եթէ ոչ՝ի յաջորդ գարնան. իսկ ուրիշներ ալ կան՝ որ ծառի վրայ երկու երեք և այլ աւելի տարի կանանչ կենալէն ետքը կը թափին, ինչպէս են սոճին [1] նոճը [2] տոսախ [3], դափնի, ձիթենի, լեռնն և այլն. այս տեսակ ծառերը որ մէկ քանի տարի տերևնին անկորուստ կը պահեն միշտադալար կ՝ըսուին:

1 Սոճի. առ. Չամ. գղ. Pin, Pinus.
2 Նոճ. առ. Սեվի. գղ. Cyprès.
3 Տօսախ. առ. Շիմշիր. գղ. Buis.

© National Library of Armenia